№ 5 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 10 ՅՈՒՆՎԱՐԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 10 ՅՈՒՆՎԱՐԻ № 5

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 2—53.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

«Մշակի» ներկայ համարի հետ ուղարկում ենք Թիֆլիսից դուրս մեր բոլոր բաժանորդներին (բացի արտասահմանից) «ՀԱՍԿԵՐ» մանկական ամսագրի յայտարարութիւն-յաւելուածը:

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ՆԵՐԿԱՅ 1913 Թ. ՀԱՄԱՐ
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., 5 ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 2 ամսվանը 2 ր.: Յունվարի 1-ից մինչև փետրվարի 1-ը 85 կոպ.:

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակադրոշմ.

Հին բաժանորդներից խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով:

ՊՐԵՄԻԱՆԵՐ

«Մշակի» տարեկան այն բաժանորդները, որոնք 1913 թ. համար (սկսած յունվարի 1-ից) միանուագ կամ մաս-մաս վճարած կլինեն 10 րուբլի բաժանորդավճարը, կը ստանան ՁՐԻԱԲԱՐ հետևեալ 2 գրքերը.

1) „Մշակ" և հայ կինը", որի մէջ ամփոփված են 1872 թւականից մինչև 1891 թ. «Մշակի» մէջ լոյս տեսած առաջնորդողները, յօդուածները և բանաստեղծութիւնները, որոնք նուիրված են կանանց հարցին ընդհանրապէս և հայ կնոջ առաջխաղացման գործին մասնաւորապէս: Գիրքը բաղկացած է 7+294 մեծադիր էջից, տպված լաւ թղթի վրա, Գր. Արծրունու մեծադիր գրաւոր պատկերով և մօզայիկ-նկար շապկով—հայ կնոջ էմբլեմային պատկերով:

2) „Մշակի" քառասնամեակ" Լ. Դանիէլեանի կազմած, 1872—1912 թ.թ., 132 էջ, տպված լաւ թղթի վրա: Գրքի մէջ ամփոփված են՝ Գր. Արծրունու, Անդր. Արծրունու, Րաֆֆիի, Գ. Սունդուկեանի, Ա. Արփիարեանի, Ե. Տէր-Մարկոսեանի, Ալ. Քալանթարի և Հ. Առաքելեանի պատկերները:

«Մշակի» ոչ-բաժանորդների համար առաջին գիրքն արժէ 1 րուբլի, իսկ երկրորդ գիրքը՝ 50 կոպ.: Ճանապարհածախսը՝ 15—20 կոպ. գրքի վրա:

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃ
ԱՅՍՕՐ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՅ
ՄԱՐԳԱՐԻՏ ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ
●●●● ՀԱՄԵՐԳԸ ●●●●

ԲԷԿԿԵՐԻ դաշնամուր՝ Գ. Կէքէրի խանութից: Տոմսակները 4 րուբլուց մինչև 50 կոպ. արժող, Կարլ Ձումանի խանութում, իսկ երեկոյեան ժամը 7-ից դահլիճի մուտքի մօտ: Սկիզբը երեկ. ժամը 8½-ին: 19. 1—1

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ
Կիրակի, յունվարի 13-ին, կը կայանայ
ՀԱՄԵՐԳ
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ՊՐՈՖԵՍՍՈՐ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ
Սկիզբն է երեկոյեան ժամը 8½-ին:

Տոմսակները վաճառվում են պ. Սուղանաճեանի մուզիկ. խանութում, իսկ համերգի օրը, երեկոյեան ժամը 6-ից դահլիճի մուտքի մօտ:

ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՖԻՇԱՆԵՐՈՒՄ ԵՒ ՊՐՈԳՐԱՄՆԵՐՈՒՄ.
(չ.ն.չ.կ.) առ. 9. 5—3

Հինգշաբթի, յունվարի 10-ի երեկոյեան ժամը 7-ին
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ (ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՆԱԽԿԻՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ)
տեղի է ունենալու ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ԳԻՒՂԱՏՆՏ. ԵՒ ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿ.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ
Զբաղմունքի առարկաներ.
1) Գիւղատնտեսական գիտութիւնների դասաւանդութիւնը ժողովրդական դպրոցներում: Զեկուցումն Ս. Աբանասեանի:
2) Մեղուաբուծական հրահանգչական գործունէութեան կազմակերպումը: Զեկ. Աւս. Մխիթարեանի:
3) Տնտեսական տարբեր պայմանները Անդրկովկասում: Զեկուցումն Գ. Մուրադեանի:
4) Թռչնաբուծութիւնը Ալէքսանդրապօլի գաւառում: Զեկուցումն Մկրտ. Նաւասարդեանի:
5) Գիւղատնտեսական ցուցահանդէսները 1913 թւին: Զեկուցումն Ս. Քալանթարի:
Ժողովին կարող են ներկայ լինել նաև կողմնակի անձինք, որպէս հիւրեր:
(առ.) 16. 2—3

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
ներքին հիւանդութիւնները՝
առանձնապէս կրծքի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի:
Բժշկութիւն նաև տուբերկուլիններով, ՌԱԴԻՈ պրէպարատներով և էլեքտրականութեամբ:
Ընդունելութիւնը ամեն օր, ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
առաւօտեան ժամը 9--12-ը և երեկոյեան ժամը 5—7-ը:
Սօլօլակ, Բէհբութեան փող. № 23 (անկիւն Գանովսկայա): Հեռախօս 7—92.
(ա.օ.) առ. 699. 100—87

ԲԺԻՇԿ
Յ. Մելիք-Նուբարեան
ներքին և երեխաների հիւանդութիւնների, առանձնապէս թոքերի:
Թոքախտի բժշկութիւնը տուբերկուլիններով և պնևմատորակսով.
Ընդունելութիւնը ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Ամեն օր (առաւօտեան 12—1 ժ.
(երեկոյեան 5—7 ժ.
Սօլօլակ, Ռուդչևսկայա 10 (Լերմոնտովսկ. դեղատան դիմացը):
(Ե. Հ. Կ.) առ. 746. 100—41

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռուդչևսկայա 13, տելեֆօն 4—21.
Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից), վաղօրօք գրվելու պայմանով:
Ընդունելութիւն կանացի, ներքին և մանկական հիւանդութիւն ունեցող երթևեկ հիւանդների, ամեն օր՝ ցեր. ժամը 11-ից մինչև 12-ը:
Ընդունելութիւն պրոֆ. Մ. Ս. Սուբբոտինի կողմից վիրաբուժ. կարիք ունեցող հիւանդների, վաղօրօք գրվելու պայմանով, երկուշաբթի և հինգշաբթի օրերը ցեր. ժամը 1—2-ը:
Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Ցարուխինեան, Ն. Ն. Վեսելովզորով, Վ. Ա. Զակրժեվսկի, Ի. Գ. Կալամկարեան, Ա. Ա. Նովիցկիյ, Գ. Ն. Տէր-Ներսէսեան, Ն. Զ. Ումիկեան, Ա. Ր. Ֆիշէր, Ս. Պ. Շահպարոնեանց. Կոնսուլտանտ՝ պրոֆեսսոր Մ. Ս. Սուբբոտին:
(Հ.Կ.) առ. 797. 100—21

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և սեռամորթա-աղիքային հիւանդութիւններ:
Պրոֆ. Mathieu-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզից
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11-ը:
(երեկ. ժ. 5—7-ը:
Միխայլովսկի պր. 86, տելեֆ. № 576.
(Ե.Հ.Կ.) առ. 179. 100—77

ԲԺԻՇԿ
ՇՈՒՇԱՆԻԿ ՆԱԲԱԹԵԱՆ
Ընդունում է հիւանդներ կանանց և մանկաբարձութեան վերաբերեալ ամեն օր, բացի կիրակի օրերից, երեկ. ժամը 5—6-ը:
Հասցէն՝ Ռուդչևսկայա № 1.
առ. (Կ. Ե. Հ.) 4. 100—3

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

ԻՐԱԳՈՐԾԵԼԻ ՊԱՀԱՆՋՆԵՐ

II

Պետութիւնները, մոռանալով իրանց կերպ հասկացած քաղաքական շահերը, եթէ ստեղծեն Միջերկրականի, Պարսից Ծոցի և Սև Ծովի միջև ընկած տարածութեան վրա եղած և լինելիք ճանապարհների հանգոյցում, այսինքն Հայաստանում, արհեստական մի մարմին, որքան կենսունակութիւն կունենայ և որ չափով նա կապահովէ իր սահմաններից դուրս գտնվող Թիւրքահայերի մարդկային իրաւունքները: Այդ մարմինը կազմողները կարող են հարց տալ իրանց թէ՝ որտեղից պէտք է այս փոքրիկ, աղքատ և յետամնաց երկիրը նիւթական և մտաւոր այնքան ոյժ ստանայ, որ կարողանայ համ զսպել թւով մեծամասնութիւն կազմող վայրագ ցեղերին, որոնց արիւնակիցները նոյն աւտոնոմ երկրի սահմաններից դուրս էլ զօրեղ են, համ իրագործել այն բարդ վարչա-դատաստանական րէֆօրմները և առհասարակ կատարել այն տնտեսական ու կուլտուրական բազմազան ձեռնարկութիւնները, որոնց համագումարը տալիս է մի երկրի կարողութիւն՝ ապրել ինքնուրոյն կեանքով և առաջադիմել: Միթէ յայտնի չէ մեզ, թէ, օրինակի համար, Կովկասի լեռնականներին զսպելու և քաղաքացիական կարգեր մտցնելու համար հզօր Ռուսաստանը ինչ տիտանական ջանքեր, ինչ անհագին նիւթական միջոցներ գործ դրեց:

Դուցէ հայ առաջնորդները միացած թիւրք մուֆտիների հետ կարողանան համոզել քիւրդ-շէյխերին իրանց քարոզներով փոխել տալ քիւրդի աշխարհայեացքը, կենցաղը, ինստինկտները... Դա կը լինէր պատմութեան մէջ չը տեսնված մի հրաշք, որ հիմնովին կը ժխտէր սօցիօլօգների դաւանած սկզբունքները... Որտեղից պէտք է գտնեն մեծաքանակ դրամ և բազմաթիւ պատրաստված մարդիկ և զինուորական ոյժ իրանց երկրում կարգ ու կանոն հաստատելու և կուլտուրական անհագին գործեր կատարելու համար, քանի որ այդ երկրի մէջ ազգաբնակութիւնը թւով ցանցառ է, ցեղա-կրօնական կազմով տարբեր, դրամով աղքատ, մտաւորապէս դեռ անօգնական, չունի ճանապարհներ և երեք կողմից պէտք է շրջապատված լինի ոչ պակաս յետամնաց, աղքատ թիւրք քիւրդական թշնամի ազգաբնակութիւնով: Յոյս դնել սուզերէն Թիւրքիայի օժանդակութեան վրա չէ կարելի, որովհետև յայտնի է, որ՝ եթէ քաչալը դեղ գիտենայ, նախ իր գլխի ճարը կը տեսնի... Մնում է դարձեալ մի նոր բռնազբօսիկ ենթադրութիւն անել, այսինքն յուսալ, որ մի այլ եւրոպական պետութիւն, լոկ հայ ազգի գեղեցիկ աչքերի համար, յանձն կառնի բանալ աւտոնոմ Հայաստանի համար իր գանձարանը, ուղարկել այնտեղ իր վարչական, զինուորական և տեխնիկական ոյժերը, մի խօսքով լոկ քմահաճ զուարճութեան համար անշահասիրաբար ջանքեր թափել մի Էլդօրադօ ստեղծելու Եփրատի և Տիգրիսի արանքում, ուր հնում Եհովան արժանի էր գտել հիմնելու իր դրախտը...

Այն էլ ի հարկէ ճիշդ է, որ Թիւրքահայաստանի մի մասի գրաւումով Ռուսաստանի կողմից՝ չէ լուծվում բոլոր Թիւրքահայերի մարդկային իրաւունքների ապահովման հարցը, թէև դրանով Անդրկովկասի հայութեան միանում է հողի հետ կապված բաւական ստուար հայ գիւղացիութիւն. մի բան, որ ինքն ըստ ինքեան ահագին ազգային կուլտուրական հետևանքներ պէտք է ունենայ: Միևնոյն ժամանակ չը պէտք է մոռանալ, որ այդ գրաւումը աւելի ևս իրաւունք կը տայ Ռուսաստանին՝ բարձրացնել իր հզօր ձայնը մնացած Թիւրքահայերի օգտին: Ուրեմն այդ գրաւման հարցը, եթէ իրականանայ, Թիւրքահայերի դատը ամբողջապէս չը լուծելով անգամ ոչ միայն չի արգելում, այլ նոյնիսկ որոշ չափով նպաստում է նրա այլ կարգաւորումներին:

Ներկայ պարագաներում կարելի է խօսել միայն այլ իրագործելի պահանջների մասին:

Յայտնի է, որ Բեռլինի տրակտատի 61-րդ յօդուածը պարտաւորեցնում էր Բ. Դրան անյապաղ իրագործել բարենորոգումներ և րէֆօրմներ այն նահանգներում, որտեղ ապրում են հայերը: Հայերը ապրում են համարեա բոլոր նահանգներում, ուրեմն ամեն տեղ Թիւրքիայում պէտք է ձեռք առնվեն իրական միջոցներ՝ ապահովելու համար նրանց մարդկային իրաւունքները: 35 տարի առաջ Թիւրքիայի վրա պարտաւորութիւն էր դրված պարբերաբար հաղորդել մեծ պետութիւններին, հայերին ապահովելու ձեռք առած միջոցների մասին ոչ միայն ի տեղեկութիւն, այլ և որպէսզի մեծ պետութիւնները հնարաւորութիւն ունենան վերահսկել այդ միջոցների կիրառութեան վրա: Անցեալի տխուր փորձը պէտք է այժմ թելադրի խնդրել մեծ պետութիւններից՝ անել այդ յօդուածից տրամաբանօրէն բղխող յաջորդ քայլը և աւելի գործնական ձև տալ վերահսկողութեան: Քանի որ վեց պետութիւնները միասին վերցրած առանց երկար ու բարակ բանակցութիւնների և ձգձգումների անկարող են իրականապէս գործադրել տալ յիշեալ յօդուածը, մնում է այժմ աշխատանքի բաժանման սկզբունքին հետևել. իւրաքանչիւր պետութիւն յանձն է առնում հսկել բարենորոգումների վրա իր քաղաքական ազդեցութեան ենթակայ Թիւրքիայի երկրամասերում: Որ այդ ազդեցութեան շրջանները գոյութիւն ունեն, դա փաստ է: Արդ՝ վերահսկումը հայերի կեանքը, գոյքը և պատիւը ապահովող միջոցների մասին աւելի հեշտ է իրագործել, եթէ Ռուսաստանին յանձնվի այդ անել իր սահմանակից երկրներում, Անգլիային՝ դիցուք Կիլիկիայում, Ֆրանսիային՝ Սիրիայում, Գերմանիային՝ Փոքր-Ասիայի միւս մասերում և այլն: Դա մի պահանջ է, որ հեշտութեամբ բղխում է մի անգամ արդէն վեհաժողովով հաստատված որոշումից: Եւրոպական պետութիւնները այդպէս վարվելով իւրաքանչիւրը իր ազդեցութեան շրջանում անգնահատելի օգուտներ կարող են ստանալ հովանաւորված հայութիւնից, որը հանդիսանում եւրոպական կուլտուրայի և առևտրի զարգացման յարմարագոյն պիոները Թիւրքիայում: Գիտակցութիւնը, որ իւրաքանչիւր հայ գտնվում է եւրոպական որևէ պետութեան ներկայացուցչի հովանաւորութեան տակ, կը ստիպէ թիւրքերին յարգել հայերի մարդկային իրաւունքները: Այժմ էլ կաթօլիկ և բողոքական քրիստոնեաները Թիւրքիայում գտնվում են զանազան պետութիւնների հովանաւորութեան ներքոյ, հետևաբար հայ քրիստոնեաների հովանաւորութիւնը քրիստոնեայ պետութիւնների կողմից մի արտակարգ պահանջ չէ.

Եթէ Թիւրքիային ապագայում աջողվի ազատվել եւրոպական ներկայ խնամակալութիւնից և մի հրաշքով կարողանայ դառնալ եւրոպական կարգ ու կանոններ իւրացրած քաղաքակիրթ մի երկիր—բարի, իսկ եթէ ոչ և նա բաժան-բաժան եղաւ խնամակալների մէջ—դարձեալ շատ բարի խաղաղասէր և աշխատասէր հայի համար:

Անկախ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Կ. Պոլսից Վիէննա հեռագրում են, որ հայ ազգային ժողովը գաղտնի խորհրդակցութեան մէջ որոշել է ձեռք բերել Հայաստանի աւտոնոմիա գոյութիւն ունեցող օրէնքների սահմաններում:

Ժընևի հայ ուսանողների կոնգրէսը խօսեց Հայաստանը Թիւրքական երկրից անջատելու դէմ, ցանկութիւն յայտնելով սահմանել մեծ պետութիւնների վերահսկողութիւն աւտոնոմ Հայաստանում բարենորոգումներ մտցնե[illegible]

Արտասահմանեան լրագիրների ասելով՝ ներկայումս մեծ պետութիւնները մշակում են բարենորոգումների նախագիծ Փոքր-Ասիայի համար: Այդ նախագիծը յանձնվելու է Բ. Դրանը:

Կ. Պոլսում հրատարակվող «Ազատամարտ» թերթի խմբագիր Վարդգէսը դատապարտված է 2 ամսով բանտարկութեան նրա համար, որ իր թերթում տպել էր, թէ աւազակ քիւրդերը մնում են անպատիժ: Դատարանում Վարդգէսը մի շարք մերկացումներ արեց թիւրքաց կառավարութեան հասցէին:

Պետերբուրգի Հեռագրական Գործակալութեան թղթակիցը Վիէննայից հեռագրում է, որ Բուկովինայում բնակվող հայերը, լրագիրների ասելով, դիմել են Բերխտօլդին խնդրելով վերջ դնել վերջապէս Թիւրքահայերի հալածանքին:

«День»-ը պնդում է, որ ոչ Լոնդոնի վեհաժողովի առաջ, ոչ էլ Ռուսաստանի առաջ հայ ներկայացուցիչները ոչ մի միջնորդութիւն Հայաստանի բարենորոգումների մասին չեն յարուցել:

Ստացանք «Pour les Peuples d'Oriant» թերթի երրորդ համարը, որի մէջ մասնաւոր ուշադրութեան արժանի են Ֆրանսիս դը Պրէսանսէի և Վիկտոր Բէրարի յօդուածները: Ֆրանսիական քաղաքագիտական աշխարհի այդ երկու հեղինակաւոր ներկայացուցիչները հրաւիրում են դեսպանախորհուրդը՝ ոչ միայն յանուն արդարութեան, այլ յանուն Եւրոպայի դիւանագիտական շահերի օգտվել այս առիթից և վերջնականօրէն ապահովել հայկական գաւառների համար բարենորոգումները, առանց որի գտնում են, որ բալկանեան խաղաղութիւնը չէ կարող վերջ դնել արևելեան հարցին, այլ ընդհակառակը կարող է առաջ բերել Թիւրքիայի ընդհանուր բաժանման հարցը: Նա խորհուրդ է տալիս գլխաւորապէս Թիւրքերին, մի կողմ թողնել պատերազմը շարունակելու յիմար գաղափարը և իրագործել անմիջապէս բարենորոգումներ, հակառակ պարագային կանխատեսում է նրանց համար իրանց կայսրութեան քանդումը: Սոյն թերթի ներկայ համարը պարունակում է մի շարք տեղեկութիւններ Հայաստանի մէջ տեղի ունեցած սպանութիւնների և դիմադրութիւնների մասին:

ԴՐՈՒԹԻՒՆԸ ԹԻՒՐՔԻԱՅԻ ՀԱՅԱԲՆԱԿ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ

—

Կ. Պօլսի հայոց պատրիարքարանում ստացված տեղեկութիւնների համաձայն Տիգէր-խանը հրամայել է թիւրքերին ոչնչացնել 7 հայկական գիւղեր Բիթլիսի շրջակայքում։

—

Մօտկան (Բիթլիսի վիլայէթ), 14 նոյեմբ. — Բալկանեան պատերազմի իբրև հետեւանք, մեր վայրերի քիւրդերը կատարում են զզուելի ոճիրներ։ 10 օր սրանից առաջ, Քօլանիս գիւղի Ազտօ և Շաֆքակի բնակիչներին պատկանող քիւրդերը կռւի են բռնվում իրար հետ հայկական Միջցու գիւղում։ Երեք քիւրդ ընկնում են անշնչացած. բայց սրանից Յակոբ Աւետիսեան ազգանունով մի հայ սպանվում է։

Չորս օր սրանից առաջ Մերթազ գիւղացի Կիրակոս Պետրոսեան, Խաչիկ Ղարիբեան և Մակար Մկրտիչեան, Կեվէք գիւղից Երանոս Սուսուենեան, Ախբնար գիւղից Եղիա Անդրէասեան, Ելկան Շահինեան և Երանոս Աւագեան՝ բոլորն էլ իրանց գիւղերի շրջակայքում յարձակման են ենթարկվում քիւրդերից, որ նրանց սաստիկ գանակոծում են և կողոպտում։

Ներկայումս ապահովութիւնը բոլորովին բացակայում է. կառավարութիւնը ոչ մի եռանդ չէ ցոյց տալիս այս դրութեանը մի դարման գտնելու համար։

—

Սղերդ, 14 նոյեմբ.—Ալաէդդին գնդապետը, որին 80 զինւորի և 70 հեծելազօրի հետ յանձնարարված է աւազակներին յետամուտ լինել, գտնվում են 15 օրից ի վեր Պօլենտ գիւղում, ուր նա բնակվում է Կէչկօտան ցեղապետ Հաջի Մահմուդի մօտ իր ընկեր գնդապետի Ազիզ հետ միասին։ Երկուսն էլ այնտեղ մի կատարեալ հանգիստ կեանք են վարում։ Ինչ վերաբերում է զինւորներին, նրանք հիւրասիրութիւն վայելելով շրջակայ գիւղերի մուսուլման էշրաֆներից՝ բոլոր ժամանակ զուարճանում են բնակիչներին հալածելով և նրանցից պատերազմի համար զանազան տուրքեր վերցնելով։

—

Զէյթուն, 20 նոյեմ.—Մի համախօսական նամակ հաղորդում է, որ տեղական ժողովուրդը ահաբեկված՝ Զիւլֆիջուր Հաջի-բէյի դէմ գործադրված ճնշումներից, չէ վստահանում տներից դուրս գալ։ Ազգաբնակութիւնը խնդրում է պատրիարքարանին՝ վերջ դնել այս յուսահատական դրութեանը։

—

Հալեպ, 20 նոյեմ.—Ամսիս 11-ից 20 աւազակից բաղկացած մի խումբ ահ ու սարսափ է տարածում Եարպուզ գիւղի շրջակայքի խաղաղ հայ ժողովրդի մէջ։

Այս խմբի գլուխը մի Թիւրք է, Դեօրթ Քաշըը անունով։ Նոյեմբերի 5-ին Շէվլիքէից Մարաշ ուղեւորվող հայերի վրա զինված մուսուլմանների մի խումբ է յարձակվում՝ Քէօր Սեօն կոչված վայրի մօտ։ Փանոս Նազարեան անուն հայը մահացու վէրք է ստանում, իսկ միւսները կողոպտված են։

Հոկտ. 19-ին Փանոս Գահեան անունով հայը սպանվում է Դէյիրմէնդերէից Գապան գնալու ժամանակ։

Շատ աւազակներ, որոնց թւում մերգիլեցի Ջնէյթը, գեօնկեցի Դելի Օսմանը և Դելի Հասանը, ահ ու սարսափի մէջ են դրել գիւղերի հայ բնակչութիւնը։ Անցեալ օրը 200 զինւոր կանգնեցրել են 3 հայի և տարել Կօկիսօն, ուր նրանց գանակոծել է և չարչարանքների ենթարկել Ահմեդ Ջավուշ անուն կրող մի թիւրք։

—

Վան, 28 նոյեմ.—Մի քանի օր սրանից առաջ Նուրի-բէյի որդի Մահմուդը Հասբիստան (Բաշկալէ) գիւղից փախցրել է հայ զինւոր Վահրամի հարազատ կին Սանօյին։ Քիւրդերը Ջօլամերիկցի Առաքել Եգօյեանի կնոջն են փախցրել։ Եգօյեանը Երզնկայում զինւորական ծառայութեան մէջ է։

ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ԴԷՊՔԵՐԸ

(ԼՐԱԲԵՐԻ ՄԸ ՅՈՒՇԱՏԵՏՐԸ)

—

(Սեփ. Թղթակցէ)

Կ. Պօլիս, 18 դեկտեմբեր

Կ. Պօլիս կորսնցուց իր նշանակութիւնը։ Հիմա բալկանեան պատերազմին թատերաբեմը տեղափոխուած է Լօնդօն։ Հոս մինիստրներու խորհուրդը ամէն օր գրեթէ նիստ կընէ՝ Լօնդօն գտնուող Րէշիդ փաշային հրահանգներ հաղորդելու համար։ Այս որոշումներէն բան մը հասկնալ կարելի չէ։ Անոնք Լօնդօն հաղորդուելէն յետոյ, որ աշխարհի կը ծանօթանան, հոս կը մնայ միայն Թիւրք մտայնութեան ներկայացուցիչ մամուլին կարծիքները, որոնք ոչ նուազ յատկանշական են։ Այսօր կէս-պաշտօնական լրագիրներ Աւստրիոյ դիւանագիտութեան շնորհիւ Թիւրքիոյ համար նպաստաւոր կացութիւն մը ստեղծուած ըլլալը կը ծանուցանեն։

◆ Կայսեր համար կըսուի թէ Չաթալջա պիտի երթայ՝ զինուորները քաջալերելու համար։

◆ Օսմանեան կառավարութեան համար շատ գայթակղեցուցիչ իրողութիւն մը երեւան ելաւ։ Իթթիհադական նախորդ երեսփոխան Ջանբօլաթ ասկէ առաջ զինք ձերբակալելու համար ներկայացող ոստիկանը սպաննած էր, և անկէ ի վեր կը գտնուէր պատերազմական ատեանին բանտը։ Երկու օր առաջ Ջանբօլաթ կաշառելով իր վրայ հսկող պահապանները խոյս տուած է։ Ասիկա խիստ վարկաբեկիչ իրողութիւն մըն է, վասնզի պատերազմական ատեանները պարտաւոր են առ առաւելն 48 ժամէն վճիռ տալ, մինչ Թիւրքիոյ մէջ երկու ամսուան մէջ իսկ չեն կրնար եզրակացութեան մը գալ։ Ստուգուած է, որ Ջանբօլաթ 2000 անգ. ոսկի կաշառք տուած է։

Հաւանական է, որ Իթթիհադն այս փախուստը կազմակերպած է։

20 դեկտեմբեր

◆ Դահլիճին հրաժարականին վրայ այս միջոցիս շատ կը խօսուի։ Եթէ Լօնդօնի մէջ հաշտութիւնը չիրագործուի, անխուսափելի է Քեամիլ փաշայի դահլիճին անկումը։

Իթթիհադական թերթեր այս անկումը կը նկատեն անգլիասէր քաղաքականութեան ձախողուածը և կուզեն մատնանիշ ընել, թէ Թիւրքիա փոխանակ երրեակ համաձայնութենէն օգտուելու՝ աւելի օգտուեցաւ երրեակ դաշնակցութենէն, հակառակ անոր, որ Քեամիլ-փաշա առաջիններուն մարդն էր։

◆ Թիւրքական շրջանակներու մէջ հակահայ ոգի մը ցոյց կը տրուի մանաւանդ հայոց արտասահմանի մէջ ըրած դիմումներէն զգացուելով։ Րէշիդ-բէյ, ներքին գործերու մինիստր, վերին աստիճանի խորագէտ ու նենգամիտ անձնաւորութիւն մը, իր բոլոր ճիգը կը թափէ հայկական խնդիրը սպանելու համար։ Իթթիհադական լրագիր մը կայպանէ հայերը, որ անհամբերութեան նշաններ ցոյց կուտան, և կառաջարկէ «Նախ հայրենիքը փրկել և ապա բարենորոգումները գործադրել»։ Ասիկա կը նշանակէ տարբեր բացատրութեամբ մը անցնել սա նեղ օրերը և ապա բնաւ չգործադրել այդ բարենորոգումները։ Իթթիհադը իր օրգաններուն միջոցաւ պրօվօկացիա կընէ և կուզէ Թիւրք տարրին մատնանիշ ընել հայը իբր առիթը ու պատեհութիւնը շահագործող և օսմանեան պետութեան թշնամանող։

Հայորդի

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

8 յունվարի

Պետերբուրգ.—Տեղեկատու Բիւրօն ի հերքումն «Рѣчь»-ի հաղորդածի յայտնում է, որ Ռոմանովների Տան 300-ամեայ յոբելեանի տօնակատարութիւնը կազմող յանձնաժողովը բնաւ չէ մշակել ամնիստիայի նախագիծ և այդպիսին չէ ներկայացրել մինիստրների խորհրդի քննութեան։ Ամնիստիայի հարցը յիշեալ յանձնաժողովի իրաւասութեանը չէ ենթարկվում։

—

Բուդապեշտ.—«Ազէշտ» լրագիրը հաղորդում է, որ Լօվրանում բանւորները ցոյց են կազմել մինիստր-նախագահ Լուկաչի դէմ և քարեր են նետել։ [illegible] են զէնք։ 12 մարդ վիրաւորված է, որոնցից 4-ը ծանր։

—

Օպորտօ. — «Վէրօնէզօ» շոգենաւը անյայտ կորաւ։ Զոհվեցին 43 մարդ, ծանր վիրաւորվեցին 16 հոգի։

—

Պարիզ.—Բրիանը համաձայնեց կաբինէտ կազմել։ Մինիստր-նախագահ և ներքին գործերի մինիստր՝ Բրիան, արտաքին գործերի՝ Ժօնար, աշխատանքի՝ Րենէ-Բէսար, առեւտրի՝ Դիւրօ, երկրագործութեան՝ Ֆօրնանդ Դաւիթ, գաղութների՝ Ժան Մօրէլ, ծովային՝ Բօդէն, զինուորական՝ Էտիէն, լուսաւորութեան՝ Ստեէգ, արդարադատութեան՝ Բարտու, ֆինանսների՝ Կլօտց, հասարակական աշխատանքների՝ Ժան Դիւպիւի։

Տօկիօ.—(Ուշացած)։ Կայացաւ սէյիւկայա և կօկումինտօ կուսակցութիւնների բազմամարդ ժողովը։ Սէյիւկայան բանաձև ընդունեց սահմանադրութեան պաշտպանութեան մասին համաձայն կայսրի կամքի, որ ազդարարվեց գահակալութեան ժամանակ։ Սայօնջին բացատրեց, որ կաբինէտը հրաժարական տուեց զինւորական իշխանութիւնների դիմադրութեան պատճառով, որոնք համամիտ չեն ծախքերի կրճատման նախագծին։ Կօկումինտօն որոշեց. «Կուսակցութիւնը իր նպատակն է դնում կռւել կլանների դէմ և պաշտպանել սահմանադրութիւնը, որը խախտում է Կացուրան, որ կաբինէտ կազմելու ժամանակ խնդրում է կայսերական հրամաններ, այդպիսով կայսրին նետելով քաղաքական պայքարի մէջ. պարլամենտը պէտք է մեղադրէ Կացուրային սահմանադրութիւնը խախտելու մէջ»։

Կացուրան յայտնեց մամուլի ներկայացուցիչներին, որ անհնարին գտնելով համաձայնութիւն կապել գոյութիւն ունեցող քաղաքական կուսակցութիւնների հետ, նա վճռեց կազմակերպել սեփական կուսակցութիւն, որպիսին նպաստէ սահմանադրական սկզբունքների զարգացմանը համաձայն ժամանակի պայմանների։

Պարլամենտի նիստերը դադարեցին 15 օրով։

ՓԱՐԻԶԵԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

—

Ֆրանսիական հանրապետութեան նախագահի ընտրութիւնը

Պարիզ, 10 յունվարի (ն. տ.)

Այժմ Ֆրանսիայի գլխաւոր քաղաքական և ազգային հարցը՝ հանրապետութեան նախագահի ընտրութիւնն է։

Այժմեան նախագահ Արման Ֆալիէրի եօթնամեայ պաշտօնավարութեան կամ եօթնամեակի ժամանակամիջոցը լրանում է 1913 թ. փետրվարի 16-ին (ն. տ.)։ Արդ, ֆրանսիական սահմանադրութեան հիմնական օրէնքի համաձայն, նոր նախագահի ընտրութիւնը պէտք է կայանայ այդ ժամանակամիջոցից գոնէ մի ամիս առաջ։ Ուստի և սովորութիւն է դարձել ընտրել նոր նախագահին յունվարի 17-ին, այսինքն պահանջված մի ամսից մի օր առաջ։

Հանրապետութեան նախագահի ընտրութիւնը կատարվում է ազգային ժողովի ձեռքով, որ բաղկանում է պարլամենտից և սենատից։ Երկրի երկու գերագոյն օրէնսդրական ատեանները՝ պարլամենտը և սենատը գումարվելով Վերսալի պալատում՝ կազմում են ընդհանուր ազգային ժողով և ընտրում նախագահին 7-ամեայ ժամանակամիջոցով։

Թէև նախագահը վերընտրելի է, բայց ներկայ նախագահ Արման Ֆալիէրի կանդիդատութիւնը բնաւ առաջ չէ քշվում որևէ կուսակցութեան կողմից։ Ինքն էլ բնաւ հետամուտ չէ այդ պաշտօնին և փափագում է գնալ իր կալուածը, որ գտնվում է Լուպիլլօն կոչված տեղում և խաղաղ ընտանեկան կեանք վարել։ Եւ պէտք է տեսնել, թէ ի բնէ զուարթ և կատակաբան ֆրանսիացին ինչպէս է ծաղրում իր նախագահին կամ հանաքներ, կատակներ անում նրա հասցէին։ Մի ամսից աւելի է, որ փողոցներում բարձրաձայն ծախում են բաց նամակներ La d'eménagement de Monsieur Fallieres (պ. Ֆալիէրի տեղափոխութիւնը) կամ l'Entrée Triomphale de M. Fallieres à Loupillon (պ. Ֆալիէրի յաղթական մուտքը Լուպիլլօն)։ Մի սայլ լծված է մի էշի, և Ֆալիէրը քշում է այդ սայլը, ծանրաբեռնված Ելիսեան պալատի զանազան յիշողութիւններով։ Ապա սրճարաններում և փողոցներում երգում են երգեր, որոնց մէջ Ֆալիէրը ափսոսում է իր «անցաւոր փառքը» և այլն։ Մի խօսքով, խեղճ ծերունուն ծաղրում են ամեն կերպ և նրա հաշւին կատակներ անում։ Ասում են, որ նա ամենևին չի նեղանում և բարեհոգութեամբ ծիծաղում է «բարի ֆրանսիացի ժողովրդի» այդ կատակների վրա։

Իբրև կանդիդատներ, հրապարակի վրա այժմ երկու անձն կան, որոնք ամենից շատ շանս ունեն ընտրվելու, այն է 1) Րայմօն Պուանկարէն՝ մինիստր-նախագահը և 2) սենատոր Ալեքսանդր Րիբօ։ Ամենից առաջ հանդէս հանվեց Լէօն Բուրժուայի կանդիդատութիւնը, բայց երբ սա վճռապէս մերժեց, Պուանկարէն առաջարկեց Րիբօյի կանդիդատութիւնը։ Ուստի և մեծ եղաւ շատերի զարմանքը, երբ մի քանի ժամանակից յետոյ Պուանկարէն համաձայնութիւն տուեց, որ իր կանդիդատութիւնն էլ դրվի։ Այդ առիթով մի տեսակ հակառակութիւն առաջ եկաւ երկու նշանաւոր անձանց մէջ, որոնք արմատական կուսակցութեան երկու գլխաւոր ղեկավարներն են, բայց Պուանկարէն շտապեց անձամբ այցելել Րիբօյին և իր վարմունքի բացատրութիւնը տալ։ Րիբօն էլ փոխ-այցելութիւն տուեց և այդ բարեկամական տեսակցութիւնների հետևանքն այն եղաւ, որ երկուսն էլ հրատարակեցին ծանուցում, թէ դնելու են իրանց քուէտուփերը և թողնելու ազգի կամքին՝ կոչելու որին որ կը կամենայ պետութեան պետի պաշտօնին։ Կան և ուրիշ կանդիդատներ, ինչպէս Պօլ

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳՈՐԾԵՐԸ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

6 յունվարի

Լօնդօն.—Յունվարի 7-ին չը կայացած դեսպանական խորհրդակցութիւնը կը կայանայ վաղը։

Րէյտէրը տեղեկացաւ ստոյգ աղ- [illegible] բանակցութիւնների գլխաւոր հարցը վճռվել է նպաստաւոր մտքով, որով Րումինիան ստանալու է բուլգարական ծովափի մի մասը։

—

Կ. Պօլիս.—Յունվարի 9-ին սուլթանական պալատում կը գումարվի ազգային ժողով մեծ վէզիրի նախագահութեամբ։ Ժողովին հրաւիրված են գահաժառանգ պրինցը, կայսերական տան պրինցները, բարձրաստիճան զինւորական և քաղաքացիական պաշտօնեաներ։ Նիստը տեղի կունենայ դռնփակ։ Մեծ վէզիրը կը զեկուցանէ երկրի քաղաքական, զինւորական և ֆինանսական դրութեան մասին։

—

Աթէնք.—Սամոսից հեռագրում են. «Մկրտութեան տօնի առիթով Բօղոսի շրջապատի գիւղերում ցոյցեր էին պատրաստւում յօգուտ կղզին Յունաստանին միացնելու։ Իտալական իշխանութիւնները արգելք եղան ցոյցերին և զօրքեր ուղարկեցին եկեղեցիների կողմը, որպէս զի ժողովուրդը չը կարողանայ մտնել ծովափը ջրօրհնէքի հանդէսը կատարելու համար. [illegible]ցին ամբոխը սուիններով։ Գեներալ Ամէլիօն խստագոյնս արգելեց լուսանկարել այդ միջադէպը։

Մինիստրութիւնը հաղորդում է, որ Եանինայի մօտ յոյների և թիւրքերի միջև տեղի է ունեցել արտիլէրիական կռիւ. Թիւրքերն անկարգ նահանջել են դէպի Բիզանի։

Զինւորական մինիստրութիւնը հրատարակել է գեն. Սապունձակիսի հեռագիրը Էմմագից. «Այսօր արշաւանքը շարունակվեց։ Լօսէստից դէպի հիւսիս ընկած բարձունքները գրաւվեցին աննշան կորուստներով։ Թշնամին յետ նահանջեց անկարգ՝ խոշոր կորուստներով»։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ACTA, NON VERBA*)

(ԳՈՐԾ ԵՒ ՈՉ ԽՕՍՔ)

II

Անցնենք վեներական վտանգին։

Ջերմամիզութիւն (գօնօրհէա) և սիֆիլիս։

Ի՞նչ վտանգ սրանցից։

Շատերը կարծում են թէ ջերմամիզութիւնը մի հասարակ, աննշան հիւանդութիւն է։ Սխալվում են։ Ահա թէ ինչ վնասներ է նա հասցնում թէ անհատին, թէ հասարակութեանը և թէ ցեղին։

Հիւանդութեան սկզբում անհատը իր վրա տեսնում է զանազան բարդութիւններ, օրինակ՝ աչքերի եղջիկների բորբոքումներ (կերատիտ), աչքացաւ, թարախային աչքահալ (կուրութիւն), կազմուածքի ընդհանուր ջերմամիզական վարակումն իր յօդացաւով, մկնախտութիւնով և սրտի ներսի թաղանթի բորբոքումներով։ Ապագայի համար պատրաստվում են միզուկի նեղումներ, միզավարակումներ իրանց բոլոր հետևանքներով, սերմազրկութիւն՝ իբրև հետևանք երկու մակամորձիքների բորբոքման (էպիդիդիմիտ) և սրանից առաջացած բեղմնաւորութեան անբուժելի կորուստ։

Հասարակական տեսակէտից ջերմամիզութեան վտանգը և հետևանքը աւելի ծանր է։

Ամուսնական կեանքի մէջ տղամարդը մտցնում է ջերմամիզութիւնը իբրև «հարսանեաց մի ընծայ, որ նորապսակ հարսերի զամբիւղի մէջ են դրել ամուսնու սէրը նախորդ վայրկեան բաժանողները»։ Մի զզուելի ընծայ, որ խեղճ նորահարսին կը պատճառէ սեռական վարակումներ, առաջ բերելով խողովակաբորբոքում (վագինիտ), արգանդի և այլ սեռական գործարանների տանջալի հիւանդութիւններ...

Սրանից անխուսափելիօրէն առաջանում է ընտանեկան կեանքի քայքայումն։ Սկսվում են անվերջ և անախորժ անհամաձայնութիւններ, անյոյս, ապարդիւն և անվերջ բժշկութիւններ, վերջապէս սեռական գործարանների անդամահատութիւն, և կինը դառնում է ջարդված, տարափոխված և ընդմիշտ ամուլ մի խեղճ արարած...

Ցեղն էլ է տուժում, և տուժում է չարաչար, որովհետև այլասերումն է առաջանում, հետևանք տղամարդու և կնոջ ամլութեան։

Իսկ կոյրերի անհամար լէգէոնները... Արդեօք խօսենք նրանց մասին։ Մանուկը հէնց աշխարհ գալու րոպէին իր մօր արգանդից վարակվում է և դեռ Աստուծոյ լոյսը չը տեսած՝ զրկվում իսպառ իր աչքերի տեսողութիւնից։ Ապացուցված է, որ 1000 կոյրից 800-ի պատճառը ծնողների ջերմամիզութիւնն է։ Իսկ հասարակութեան վրա ինչքան թանգ է նստում ամեն մի բնածին կոյր. սա իսկապէս հասարակական պարազիտ լինելու է դատապարտված։

Ջերմամիզութիւնից վատթարը սիֆիլիսն է։ Առաջ սիֆիլիսի մասին խօսել չէր կարելի։ Ամօթ էր։ Սակայն սիֆիլիսը արժանի է աւելի մեծ ուշադրութեան, քանի որ նա մարդկութեան ամենամեծ պատուհասներից մինն է։

Մի փոքր կանգ առնենք անհատի վրա գործած ազդեցութեան վրա։ Թողնենք մի կողմ սիֆիլիսից առաջացած աչքացաւերը, երիկամունքների զանազան բորբոքումները և այլն։ Սիֆիլիսի երրորդ շրջանում առաջ են գալիս այսպէս անուանված գոմմաներ, սկլերօզ*) և կազմալուծող ու քայքայիչ երևոյթներ, որ պատահում են մարմնի ամեն գործարանների մէջ՝ կաշւի, ուղեղի թաղանթների, լեզուի, քմքաոսկրի, ըմպանի, շրթունքների, գեղձերի, ոսկորների, յօդերի, մկանունքների, մարսողական գործարանների, շնչափողի, թոքերի, սրտի, լեարդի, երիկամունքների, ամորձիքների, աչքերի, ականջների, երակների և մանաւանդ գլխի և ողնաշարի ուղեղի մէջ։ Սիֆիլիսը սիրում է ուղեղը և ներվային համակերպութիւնը. նա ուղեղի մասնական թոյնն է։ Սիֆիլիսը իրան շատ լաւ է զգում ուղեղի մէջ և այս դէպքում մարդս հէնց իր գլխից է հարուածվում, զոհ դառնալով տաբէսին (հալումաշ) և ընդհանուր անդամալուծութեան։ Ըստ Մ. Ֆուրնիէի ներվային սիֆիլիսի 100 դէպքից 22-ը առողջանում են, 19-ը մահանում, 59-ը ներկայացնում են զանազան անբուժելի ցաւագարութիւններ, նաև խելագարութիւն։

Տեսնենք, թէ հասարակութեանը ինչ վտանգ է սպառնում սիֆիլիսը։

Ընտանիքում կինը վարակվում է, ուրեմն և ամուսնութեան վերջն է սկսվում. տարաձայնութիւններ, բաժանումներ, ապահարզան։ Միւս կողմից ծծմօր վարակումներ, իր բոլոր անախորժ, զզուելի հետևանքներով։ Վերջապէս ընտանիքը նիւթապէս կործանվում է. չէ որ հիւանդութիւնը առաջացնում է աշխատանքի անընդունակութիւն. ապա ընտանիքի կերակրողի մահը. իսկ յետոյ՝ Անվերջ թշւառութիւն...

Հասարակութեան մէջ սիֆիլիսային վարակումը զարհուրելի է։ Սեռական վարակումը մեծաթիւ է. եղել են դէպքեր, որ մի կին վարակել է 200—300 տղամարդկանց։ Ոչ-սեռական վարակումների թիւը աւելի պակաս չէ։

Ցեղի վրա սիֆիլիսի գործադրած ազդեցութիւնը երևում է նախ երեխաների ահագին մահացութեան մէջ, յետոյ առաջ են գալիս ժառանգական սիֆիլիսի արագահաս հետևանքները, ինչպէս զարգացման նուազումներ, զանազան տարակազմութիւններ, որոնք արտայայտվում են այլանդակների և հրէշների ծնունդով։

⁂

Մեր ուշադրութեան արժանի երրորդ պատուհասը գինեմոլութիւնն է, մի հիւանդութիւն, որ աւելի ժողովրդական է, քան յիշածներս, և շատ տարածված է թէ քաղաքներում, թէ գիւղերում։ Գինեմոլութիւնը տուբերկուլօզի գլխաւոր և առաջնակարգ հայթայթիչն է և կարապետը։ Նա սիֆիլիսի դաշնակիցն է այն ամեն տեղ ցանցերի պէս տարածված գինետներում և պանդոկներում, ուր մի կողմից գինեմոլութեան, միւս կողմից սիֆիլիսի գիրկն են ընկնում մարդիկ։ Դեռ տեսէք, թէ ո՛րպիսի վտանգ է սպասվում անհատին գինեմոլութիւնից, յիշեմ անձուկ կերպով ալկոհոլի կործանիչ ազդեցութիւնը երիկամունքների, լեարդի (զանազան բորբոքումներ—ցիրոզ), ներվային համակերպութեան վրա (անդամալուծութիւններ)։ Գինեմոլի մի որևէ հիւանդութիւն, մանաւորապէս թոքերի բորբոքումը, շատ ծանր և չարագուշակ է դառնում. առհասարակ գինեմոլը իր՝ օղիից քայքայված կազմուածքով անկարող է լինում դիմադրել հիւանդութիւններին։

Գինեմոլութիւնը հասարակութիւնը թշուառութեան ճիրաններին է մատնում. չէ որ ընտանիքի նիւթականը պանդոկն է ամբողջապէս կլանում։ Իսկ զանազան յանցագործութիւնները։ Հասարակութեան համար գինեմոլութիւնը համանիշ է տուբերկուլօզի և խելագարութեան. գժանոցները զուգընթացաբար աճում են գինետների հետ։

Վերջապէս ցեղի համար գինեմոլութիւնը մի կատարեալ վտանգ է։ Նա առաջացնում է տեսակի ֆիզիքական տարասերումը, փոքրացնելով հասակը, առաջ բերելով վատակազմութիւններ, սկլերօզին ենթարկելով երեխայի ուղեղը, պատճառ լինելով ընկնաւորութեան և բարոյականի նուազման. իսկ սրանց հետևանք են լինում մատաղ հասակի ոճիրները և երեխաների անձնասպանութիւնների շատանալը։ Հին առածն, որ ասում է «ով խմել է, կը խմի», իսկապէս վերաբերում է գինեմոլների սերունդներին։ Այո, կայ և այդ տեսակի ժառանգականութիւն. գինեմոլների երեխաները գինեմոլ են դառնում, իսկ սրանց ժառանգների ապագան զարհուրելի է և զզուելի...

Ահա, ընթերցող, ժողովրդական հիւանդութիւնների մի քանի օրինակ, սրանց ազդեցութիւնը անհատի վրա, սրանց վտանգը հասարակութեան և ցեղի համար...

Այս պատուհասները մարդկային առողջութիւնը փչացնում են, ժողովրդի կեանքը քայքայում, ցեղերն ու ազգերը այլասերում, ոչնչացնում և անհետացնում։

Պէտք է առողջացնել անհատին, պէտք է միջոցներ ձեռնարկել ժողովրդական առողջութիւնը իր իսկական սահմանների մէջ դնելու և պահպանելու համար, պէտք է գործնականապէս առողջութիւն մատակարարել ժողովրդին. և երբ գործով այդ բոլորը կանվի, այլ ոչ թէ լոկ բոբիկ խօսքով—«acta, non verba»,—այն ժամանակ ամեն մի Նոր-Տարի առանց մեր բարեմաղթութիւնների էլ կը բերի իսկական առողջութիւն մեզ ամենիս համար։

Բժ. Արտաշէս Շխեան

---

*) Տես «Մշակ» № 1.

*) Մարմնի հիւսուածքների ախտաւոր կարծրութիւն։

Դէշանէլ, սենատի նախագահ Դիւբոստ, բայց հանրային կարծիքը յօգուտ Պուանկարէի և Րիբօյի է, և կասկած չը կայ, որ կընտրվի դրանցից մէկը։

Եթէ նախագահ ընտրվի Րայմօն Պուանկարէն, մինիստր-նախագահ կը դառնայ կամ Բրիանը կամ Միլլէրանը, երկուսն էլ նախկին սօցիալիստներ։

—

Հայոց հարցի մասին նոր տեղեկութիւն չունեմ հաղորդելու։ Եթէ բալկանեան ճգնաժամը շուտով չը վերջանայ և հայոց հարցը անմիջապէս չը դրվի ու չը լուծվի, վախ կայ, որ Չինաստանի հարցը, որ արդէն մեծ վտանգ դառնալու սպառնալիքն է անում, բոլորովին մոռացութեան ենթարկէ հայոց հարցը։ Հ. Առաքելեան

ՐԱՅՄՕՆԴ ՊՈՒԱՆԿԱՐԷ*)

Իբրև ֆրանսիացի՝ Ֆրանսիայում Պուանկարէն շատ հազուագիւտ հռետոր է։ Նա մինչև անգամ անգլիական տեսակի հռետոր չէ, այլ աւելի հիւսիսային աշխարհի, Նորվէգիայի կամ Դանիայի պարլամենտի հռետորներից է։

Նա խօսում է շատ ազատ և սահուն, մտքերը միմեանց շաղկապած, համոզեցուցիչ և ըստ արտաքինի շատ գեղեցիկ։

Միևնոյն ժամանակ միշտ և հանապազ շատ լուրջ է, շատ սառն է, շատ հանգիստ է և միանգամայն անկիրք։ Նա չունի ոչ կեղծ ձևեր, ոչ ձեռքերի շարժումներ և ոչ դեկլամացիա, առոգանութիւն։ Այսպէս խօսում են միայն գործի մարդիկ, որոնց համար իրանց ժամանակը թանգ է և գնահատում են ուրիշի ժամանակը։ Պուանկարէն շատ քիչ նման է ֆրանսիացու և արտաքինով։

Աւելի շուտ նրան կարելի է միջին դասակարգի ռուս վաճառականի տեղ դնել։

Նա միջակ հասակով, հաստ, մոխրագոյն բլօնդին է, խուզած կլոր մօրուսով, բրդոտ բեխերով և ծուռը սանրած մազերով։ Պուանկարէն սակայն բոլորովին այլ տիպի հռետոր է դառնում, երբ խօսում է ոչ իբրև պետական անձնաւորութիւն օրէնսդրական, քաղաքագիտական կամ վարչական խնդիրների մասին, այլ երբ նա հանդէս է գալիս հասարակական ճառեր ասելու, երբ նա կապված չէ պաշտօնական պայմաններով և խօսում է իբրև ազատ մտածող։ Այդպիսի դէպքերում նա իսկապէս ճարտասան է և գեղեցկախօս և ինքնուրոյն։ Նա ոգևորվում է, նրա խելքը, գիտութիւնը և պատրաստականութիւնը այնպէս են փայլում, որ նրա ունկնդիրների և ընթերցողների յիշողութեան մէջ մնում են նրա ցայտուն խօսքերը և մտքերը։

Լուսաւորութեան մինիստր եղած ժամանակ Պուանկարէն մի մեծ բանկէտում մի անգամ մի ճառով դիմեց աւարտող ուսանողներին հետևեալ բովանդակութեամբ.

«Ձեր ոգին բռնեցէք սանձերով, իմ բարեկամներ,—ասաց նա,—որպէս տաքացած ձիու։ Ձեր երակներում թող կրակ լինի, բայց գլխի վրա սառոյց։ Վիճաբանութեան մէջ կշռեցէք ձեր ամեն մի խօսքը իբրև մի քար որով դուք կամենում էք խփել ձեր հակառակորդի կրծքին։ Իմացէք ուրիշներին տաքացնել և ոգևորել՝ առանց ինքներդ տաքանալու։ Եւ ամենից շատ սիրեցէք Ֆրանսիան, որովհետև միայն այս խօսքը բաւական է, որ մեր ֆրանսիական հոգին երիտասարդանայ. և պէտք է այսպէս լինի ամենաազնիւ և հերոսական թռիչքների համար»։

Հանրապետութեան նորընտիր նախագահը և զարմանալի գործաւոր է։ Նրա ընդունակութիւնը աշխատանքի մէջ և եռանդը ուղղակի անընդհատ է և անսպառելի։ Նա հրաշալի յիշողութիւն ունի. նա շատ լաւ գիտէ ամենակարևորը ջոկել և պահել մտքում և ամբողջ ֆրանսիական բոլոր գործերին միշտ տեղեակ է։ Իր քաղաքական հայեացքներով Պուանկարէն առաջադէմ է, որի նշանաբանն է՝ «Ni revolution ni réaction». Նրա պետական ձգտումն է միշտ առաջադիմել հաստատ և հանգիստ քայլերով։ Նրա կառավարչական սիստեմը պատասխանատուութեան վրա հիմնված օրինականութիւնն է և իշխանութիւնների անխախտ բաժանումը։ Նա իբրև պետական գործիչ պահանջում է, որ պետական մեքենայի անիւները արագաբար շրջանառութիւն կատարեն։

Իր յարաբերութեանց մէջ Պուանկարէն խիստ ուշադիր է դէպի մարդիկ և դէպի գործը, բայց և վճռողական։ Նա սկզբունքով թշնամի է անորոշութեան և համոզված է, որ ժողովրդի աչքում ոչ մի բան այնպէս չէ վարկաբեկ անում իշխանութեան հեղինակութիւնը, ինչպէս տատանումը։ Այս պատճառով՝ նրա «այոն» մի անգամից վճռում է խնդիրը, իսկ «ոչը» (non, nullement) վերջնականապէս և անդառնալի կերպով փակում է և թաղում հարցը։

Ր. Պուանկարէն,—ասում է նրա կենսագիր Կուլօն,—կամքի, հաստատամտութեան, օրինականութեան և կարգի մարդ է։ Նրա ժրաջանութիւնը և աշխատանքի ընդունակութիւնը զարմանալի է և կախված է այն ըէժիմից, որ նա իր համար սահմանել է պաշտօնավարութեան առաջին օրից։

Ժամանակը նա շատ է գնահատում. նա ոչ միայն ժլատ է, այլ ուղղակի ագահ է ժամանակի նկատմամբ։ Այս միշտ հանգիստ, միշտ լուրջ մարդը եթէ երբևիցէ բարկանում է կամ զայրանում է, դա պատահում է այն դէպքերում, երբ Պուանկարէի ժամանակը պակասում է կամ նա մի որևէ գործ իր ժամանակին չէ հասցնում։ Նրա ամեն մի ժամը որոշված է և չափված, ամեն մի ժամը իր յայտնի բովանդակութիւնը և կոչումն ունի։ Նա շատ է գնահատում օրական երեք ժամվայ հանգիստը, որ նա ընթերցանութեամբ է անցկացնում։ Ֆրանսիական հասարակապետութեան նորընտիր նախագահը սաստիկ շատ է կարդում և կարդում է բազմատեսակ բովանդակութեամբ գրուածքներ։

Իր հոգու շտեմարանը միշտ ճոխացնելու և նորոգելու համար Պուանկարէն շարունակ թերթում է և կարդում բազմաթիւ գրքեր, ամսագիրներ, լրագիրներ և ձեռք բերում նոր գաղափարներ, գիտութիւն և փաստեր։

Նա, ի հարկէ, կարդում է այն, ինչ կարդալու և ուշադրութեան արժանի է։ Նշանաւոր քիմիկոս Բերտելօյի յօբելեանի օրը՝ սակայն նրա գիտութեան մատուցած ծառայութեան և արժանիքների, նրա կատարած դերի մասին ամենալաւ ճառը ասաց իրաւաբան Պուանկարէն։ Հասարակապետութեան նորընտիր նախագահը անա 20 տարի շարունակ ընտրվում է կամ պարլամենտի և կամ սենատի անդամ։ Մինչև իր ներկայ պաշտօնն ստանալը՝ Պուանկարէն չորս անգամ մինիստր է եղել, մի անգամ ելևմտից, երկու անգամ լուսաւորութեան և մի անգամ էլ արտաքին գործերի մինիստր, ապա և մինիստր-նախագահ։ Իբրև տաղանդաւոր և թարմ տնտեսագէտ՝ նա յայտնի եղաւ պարլամենտի ելևմուտքի մասնաժողովներին մասնակցութեան ժամանակ։ Պուանկարէն երբէք չէր վախենում դուրս գալու ամենալայն ժողովրդական ծրագիրներով տնտեսական խնդիրներում, և նա գիտէր պաշտպանել իր առաջարկութիւնները պալատում և երկրի առաջ ֆինանսիստին անմատչելի պարզութեամբ և որոշականութեամբ։ Նա տնտեսական խնդիրների մասին խօսում էր այնպիսի հասկանալի լեզուով, որ ամբողջ Ֆրանսիան ըմբռնում էր նրա ասածները։ Պուանկարէն զարթեցրեց և առաջ քաշեց Ֆրանսիայի ֆինանսների համար երկու նշանաւոր խնդիրներ, որոնք փոթորիկ բարձրացրին հարուստ բուրժուազիայի շարքերում։ Նրա դէմ դուրս եկաւ հարուստ դասակարգը իր բոլոր ոյժով և ազդեցութեամբ։

Նա յարուցեց ժառանգութիւններից աւելացող պրօգրեսիվ պետական հարկ առնելու և ընդհանուր պրօգրեսիվ հարկատուութեան խնդիրները։ Երկրորդ ծրագիրը և բարենորոգումը դեռ վերջացած չէ և ընդունված չէ Ֆրանսիայում, իսկ ժառանգութիւններից արդէն պրօգրեսիվ տուրք առնում են։

Իր ծրագիրների պաշտպանութեան համար Պուանկարէն մի շարք ճառեր է արտասանել, որոնցից մի քանիսը առաջադէմ մամուլը խրախուսանքով է ողջունել։ Այդ ճառերից մէկում Պուանկարէն ասում է, թէ եկամտային հարկը ոչ միայն մի ֆինանսական վիճելի տեսութիւն է և ոչ էլ մի ուսուցումն, ոչ։ Եկամտից հարկ առնելու սկզբունքը խելացի և արդար կեանքի գերագոյն պահանջ է, սա ինքը արդարութիւնն է և տուրքերից ամենաբնականը։ Քաղաքակիրթ և առաջադէմ երկիրը չէ կարող առանց եկամտային տուրքի ապրել։

Ֆրանսիայում մտցնել եկամուտներից հարկ առնելու օրէնք,—ասում է նա պատգամաւորներին,—անվիճելի պարտք է և նոյնիսկ իրաւունք է և երկրի ու ազգաբնակութեան հանդէպ ունեցած պարտականութիւն։ Սակայն մինչև այսօր էլ հարկատուութեան այս սիստեմն ընդունված չէ Ֆրանսիայում։

Սակայն Պուանկարէն միանգամայն աջող կերպով տարաւ համալսարանների բարենորոգման գործը, երբ լուսաւորութեան մինիստր էր։ Իր ծրագիրը պաշտպանելու ժամանակ նա միշտ ասում էր, որ առաջադէմ և ազատ երկիրը պիտի ունենայ և առաջադէմ ու ազատ դպրոց։

Ֆրանսիական ակադեմիայի կողմից ողջունելով Պուանկարէին՝ իբրև նոր անդամ՝ ճառախօսը ասաց, թէ Պուանկարէն ստեղծեց ֆրանսիական նոր համալսարաններ, որոնք համաշխարհային գիտութեան պալատներ են՝ լի եռուն կեանքով և լոյսով։ Միմիայն լուսաւոր և մեծ ազգը կարող է այսպէս հոգալ և խնամել իր գիտութիւնը։ Միմիայն այն երկիրը, որ պատմական քաղաքակրթութիւն է ստեղծել, կարող է գիտութեան համար ոչինչ չը խնայել և սիրով ու առատութեամբ վերաբերվել լուսաւորութեան գործին։ Ֆրանսիական համալսարաններում ուսանում են և աշխատում հազարաւոր օտարազգիներ, որոնք ձգտում են այդ դպրոցները, որովհետև ճանաչում են և գիտեն, որ այնտեղ ոչ միայն գիտութեամբ են զինվում մարդիկ, այլ և ոյժ, արժանապատուութիւն և ազնուութիւն են ձեռք բերում։

Պէտք է նկատել, որ ֆրանսիական լուսաւորութեան գործին կատարած ծառայութիւնների համար Պուանկարէն ընտրվել է ակադեմիայի անդամ, որովհետև գրականութեան և արուեստի վերաբերեալ նրա գրքերը թէև խելացի և բովանդակալից են, բայց իբրև գիտնական հեղինակութիւններ, ի հարկէ, քիչ են ակադեմիայի անդամ ընտրվելու համար։ Ակադեմիայի անդամների կողմից Պուանկարէի ընտրութիւնը քաղաքացիական երախտագիտութեան նշան էր։ Նրա «Ժամանակակից գաղափարները», «Քաղաքական հարցեր և գործիչներ», «Գրականութիւնից և գեղարուեստից» վերնագրով գրքերը եթէ ուրիշինը լինէին, հազիւ թէ հեղինակին կարողանային արժանացնել արծաթէ դափնիներով զարդարված կանաչ շքազգեստին։ («Р. В.»)

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, 26 դեկտեմբերի

Ստացվեց Վեհափառ Հայրապետի անդրանիկ կոնդակը Թաւրիզում։

Առաջն. փոխանորդ Կար. ք. Մանուկեանի գրաւոր յայտարարութեան համաձայն, դեկտեմբերի 28-ին, կոնդակի հանդիսաւոր ընթերցումը տեղի ունեցաւ Բերդաթաղի ս. Աստուածածին եկեղեցում խուռն բազմութեան ներկայութեամբ։

Կոնդակի ընթերցումից յետոյ հ. փոխանորդը խօսեց քարոզ, պարզաբանեց կոնդակի բովանդակութիւնը և յորդորեց ժողովրդին ըմբռնել ու ի կատար ածել Վեհի խորհուրդներն ու խրատները։

Ա. Արասխանեանի անսպասելի մահվան բօթը հասած լինելով Թաւրիզի հայ հասարակութեան։ Կենտր. ուսումնարանի ուսուցիչների նախաձեռնութեամբ, նոյն օրը, Վեհի անդրանիկ կոնդակի ընթերցման արարողութիւնից յետոյ, կատարվեց նաև հոգեհանգիստ։

Ա. Արասխանեանի մօտիկ ծանօթներից և կենտր. ուսումնարանի այս տարվայ ուսուցիչներից Սենեքերիմ Տէր Յակոբեան խօսեց կարճ ու պատշաճ դամբանական, հանդէս բերելով հանգուցեալի արժանաւորութիւնները՝ իբրև հրապարակախօսի, որ դժբաղդաբար չը գտաւ իր արժանաւոր տեղը առաջնակարգ շարքերում։

Յայտնի է արդէն «Մշակի» ընթերցողներին Ատրպատականի առաջնորդարանի նիւթական խիստ անմխիթար վիճակը։ Թեմական տպարանը ոչ մի արդիւնք չը տուեց, երբ տպարանն յանձնվել էր թեմական խորհրդի միջոցով վարձված տեսչին։ Երկու ամսից աւել է, որ տեսուչը հրաժարվել է և տպարանը կառավարվում է գրաշարներով և փոխանորդի մասնաւոր հսկողութեամբ։ Ուրախալի է յայտնել, որ տպարանը, իր ծախսերն հոգալուց բացի, ամսը 25—30 թումանի մի գումար ևս տալիս է առաջնորդարանին։ Հայր փոխանորդը անդադար ջանքեր է գործ դնում և նրան աջողվեց Եսովբ Բժշկեանի որբերի 1911—1912 տարիների դպրոցական ծախսը վճարել, մի պարտք, որի անվճար մնալը երբէք պատուաբեր չէր հայոց առաջնորդարանի օտար միսիայի հանդէպ։

Րաշիդ-ուդ-Դօվլէ Քեաբիմ խանը տակաւին Թաւրիզումն է գտնվում։ Առաջնորդական փոխանորդը, շնորհիւ վաճառականապետ աղա Զաքարիա Նազարբէգեանի խորհուրդների և աջակցութեան, դիմեց Սըփէհդարին Ազամին և Շուջա-ուդ-Դօվլէին, պահանջելով կարգադրել քէյվանցի հայերի պահանջները։ Կառավարութիւնը որոշել է Սըփէհդարի մօտ այսօրերս ժողով գումարել և նայել այդ դատին։ Շուջա-ուդ-Դօվլէն և Րէշիդ Մուլքը պաշտպանում են հայերին, և յոյս կայ, որ առաջնորդարանի այս քայլը աջողութեամբ պսակվի։ Հետևանքի մասին կը գրեմ «Մշակին»։

Հայկազուն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆՑԱՒ ՅՕԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

—

Անցեալ տարի «Մշակի» 40-ամեակի համար յօբելեանական տարի էր։ Շնորհաւորանքներ արվեցին, բարեմաղթութիւններ թափվեցին ամեն կողմից անվերջ, անծայր. դրամական նուէրներ, նիւթական օժանդակութիւն տրվեցին նոյնպէս ամբողջ տարում։ Այդ բոլորը ցոյց տուեցին այն, որ «Մշակը» արժանի է իր վարձին։

Այդ բոլորը դեռ քիչ էր, սակայն դեռ պակաս այն արժանաւորութեան չափը, քանի որ Գր. Արծրունու գործը, նրա հիմնած օրգանը աւելի է արժանի գնահատութեան։

Անուրանալի է, որ «Մշակը» իր առաջին շրջանում իր հիմնադրի ձեռքով փառաւոր կերպով կատարեց իր միսիան, ամուր պահելով այն դրօշակը, որի վրա գրված է «Առաջադիմութիւն, հաւասարութիւն և պարտաճանաչութիւն»։ Նոյնը ոչ պակաս չափով կատարվեց նաև նրա երկրորդ շրջանում՝ յաջորդ 20-ամեակում, մի շրջան, երբ «Մշակի» աւանդապահ յաջորդները իրանց ստանձնած առաջադիմական սրբազան գործի դեկը առաջ վարեցին անսասան կերպով էլ աւելի բարձր բռնելով իրանց ձեռքում «Մշակի» դրօշակը։

Սուրբ է այդ դրօշակը, մաքուր նրա գաղափարը, որովհետև նրա տնօրէնը, նրա հիմնադիրը սրբութեան և արդարութեան պատգամներով է յանձնել նրան իր յաջորդներին, իր ժառանգներին։

Անցաւ յօբելեանական տարին։

Անցաւ և գնաց 40 տարին։

Ցանկանք «Մշակին» էլի շատ յօբելեանական տարիներ, իսկ նրա ղեկավարներին էլ աւելի ոյժ, բարոյական կորով՝ առաջ վարելու հասարակական առաջադիմութեան սրբազան գործը։

Յօբելեանական տարվայ վերջում կրկնելու եմ՝ կեցցեն «Մշակի» ղեկավարները, կեցցեն նրա ամրակուռ սիւները՝ Ալ. Քալանթար, Հ. Առաքելեան և Յ. Տէր-Մարկոսեան։

Անցաւ յօբելեանական տարին. «Մշակը» մտաւ է մի նոր շրջան, մի նոր փուլի, նոր տարվայ մէջ և նուաճելու է դեռ շատ սրտեր, շատ մտքեր հայ հասարակութեան և հայկական կեանքի տարեգրութեան մէջ։

Գ. Սինանեան

Նոր-Բայազէտ

ՄԱՐԳԱՐԻՏ ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ ԿՈՆՑԵՐՏԸ

—

Այսօր, յունվարի 10-ին Արտիստական Ընկերութեան թատրոնի դահլիճում, տեղի է ունենալու պիանիստուհի օր. Մարգարիտ Միրիմանեանի կոնցերտը։

Թիֆլիսի երաժշտասէրները սպասում են անհամբերութեամբ լսելու օր. Մ. Միրիմանեանի նուագումը պիանօյի վրա, որովհետև դեռ Թիֆլիսի երաժշտական դպրոցում նա արտակարգ ընդունակութիւններ էր ցոյց տալիս։ Աջողութեամբ աւարտելով երաժշտական դպրոցի դասընթացքը Թիֆլիսում, օր. Միրիմանեան մտաւ Պետերբուրգի կոնսէրվատորիան, ուր աշակերտեց Ա. Ն. Եսիպօվային, սակայն երկու տարուց յետոյ ստիպված էր թողնել կոնսէրվատորիան հիւանդութեան պատճառով։ Հետևեալ տարվայ գարնանը մեծ աջողութեամբ քննութիւնն տուեց և ստացաւ ազատ գեղարուեստագէտի կոչումը։ Կոնսէրվատորիան աւարտելուց յետոյ՝ գնաց Վիեննա հռչակաւոր Լէօպօլդ Գադօվսկիի մօտ և ընդունվեց ուղղակի բարձրագոյն բժշկական ակադեմիայում։ Օր. Միրիմանեան անցեալ տարի կոնցերտ տուեց Պետերբուրգում և, մայրաքաղաքի լրագիրների խօսքով, մեծ աջողութիւն ունեցաւ։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Սիմֆերոպօլի հայ հասարակական գործերից

Սիմֆերօպօլ, 18 դեկտեմբերի

Դեկտեմբերի 9-ին տեղիս հայոց եկեղ. ծխ. ուսումնարանի դահլիճում կայացաւ ընդհ. ծխ. ժողով, որի զբաղման առարկան էր.

1) Հանգուցեալ Ստեփաննոս Շչետրինի օրինաւոր ժառանգ՝ պ. Յովակիմ Շչետրինի դրամագլխի հարցը։ Վիրջինա Ստեփաննոս Շչետրինի մահից յետոյ ժառանգել էր նրա ամբողջ կարողութիւնը և իր կողմից գրաւոր խոստացել էր տալ սրանից 8—9 տարի առաջ, այն ժամանակվայ երէցփոխ Պետրոս Սուբաշիին, նուիրել 6000 ր. տեղիս հայոց ս. Աստուածածնի Վերափոխման եկեղեցուն։ Որովհետև Յովակիմ Շչետրինի գրաւոր խոստման ժամանակը լրանալուն մօտ էր, երէցփոխ Գ. Աբէլեանը այդ հարցը դրեց՝ ծխ. ժողովի բարեհայեցողութեանը։

Ժողովը այս հարցը բաւականին ծեծելուց յետոյ ընտրեց ծխականներից երեք անձնաւորութիւն, որոնք ուսումնարանի հոգաբարձութեան հետ պէտք է աշխատեն մի ամսվայ ընթացքում բաւարարութիւն ստանալ՝ Յ. Շչետրինից, հակառակ դէպքում դիմելու են դատարանին։

2) Ժողովը պէտք է քննէր և հաստատէր եկեղ. երգեցիկ խմբի 1910 հոկտ. մինչև 1912 թ. սեպտ. ամսվայ հաշիւը, բայց զանազան պատճառներով կարելի չեղաւ ներկայ ժողովում այս հարցը լուծել և յետաձգվեց յետագայ ծխ. ժողովին։

3) Պէտք է քննվէր ուսումնարանի 1911—1912 ուսումնական տարվայ հաշիւը և պէտք է հաստատվէր՝ 1912—1913 թ. նախահաշիւը։ Նախ քան հաշիւների քննելը ժողովի նախագահ Մ. Զայցեանը կարդաց հաշիւների մասին՝ վերստուգիչ յանձնաժողովի մի արձանագրութիւնը, ուսումնարանի հոգաբարձութեան գործունէութեան մասին։

Այս հարցը ևս չը նայվեց, ժամանակի ուշ լինելու պատճառով։ Բագիկ

—

Մարիամ Մագլումեանի մահը

Ղարասուբազար, 24 դեկտեմբերի

Ամսիս 16-ին Հին-Ղրիմում կնքեց իր մահկանացուն տիկին Մարիամ Սարգսեան Մագլումեանը. հանգուցեալը մինն էր այն սակաւաթիւ անձնաւորութիւններից, որոնք իրանց կենդանութեան օրով անմահացնում են իրանց անունը բարի գործերով։ Հանգուցեալի նուիրաբերած 5000 ր. տոկոսներով պահվում է Ղարասուբազարի հայոց բարեգ. ընկ. խնամքին յանձնված կար ու ձևի դպրոցը, որ և կրում է հանգուցեալի անունը՝ «Պետրոս Մարիամեան» կար ու ձևի դպրոց։

Մահվան գոյժն առնելու պէս՝ տեղիս բարեգործական ընկերութեան վարչութիւնը ներկայացուցիչ ընտրեց հանգուցեալի թաղման ներկայ լինելու համար Գրիգոր Բէնլիբեանին, յանձնարարելով վերջինիս պսակ դնել նրա դագաղի վրա և կարդալ այն ցաւակցական թերթը, որ այստեղից ուղարկվեց Հին-Ղրիմ։

Իսկ երէկ, ամսիս 23-ին, տեղիս եկեղեցում, պատարագից յետոյ, բարեգ. ընկ. վարչութեան նախաձեռնութեամբ, հանգուցեալի յիշատակին հոգեհանգիստ կատարվեց, որին ներկայ էին վարչութեան անդամները, «Պետրոս Մարիամեան» կար ու ձևի դպրոցաշակերտուհիները իրանց ուսուցչուհու հետ։ Նախ քան հոգեհանգիստը ծխատէր Ա. ք. Մեղրիկեանցը մի քանի խօսքով ուրուագծեց հանգուցեալի բարեմասնութիւնները։ Յար. Օրդուեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Թիֆլիսումն է գտնվում ներկայումս Պետական Դումայի հայ պատգամաւոր երև.-հաւ. Պապաջանեանը։ Նա վերջնականապէս ապաքինվել է իր տկարութիւնից և յունվարի 15-ին մեկնում է Պետերբուրգ Դումայի վերամուտքներին մասնակցելու համար։

◆ Ռոստովում Դ./վ. հրատարակվող «Пр. Край» մեծ թերթը յունվարից հրատարակվում է երկու անգամ օրական, առաւօտեան և երեկոյեան։ Այդ թերթի ասելով, «Դաշնակցութեան» մի քանի անդամների անջատված գործը, ինչպէս ենթադրվում է, քննվելու է Նովօչերկասկի դատաստանական պալատում։ Սենատից ստացվել է շատ ապացուցագրեր այդ գործի առիթով։

◆ Յիշեցնում ենք, որ այսօր հինգշաբթի, երեկոյեան ժ. 7 և կէսին Ներսիսեան դպրոցի հին շինութեան մէջ տեղի կունենայ Թիֆլիսի Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութեան նիստը։ Կը կարդացվեն Աթանասեանի, Մուրադեանի, Մխիթարեանի, Քալանթարի և Մ. Նաւասարդեանի զեկուցումները։

◆ Այսօր Թիֆլիսի դատաստանական պալատում վերստին քննվում է Բագուի միլիոնատէր Հ. Զ. Ա. Թաղիէվի յայտնի գործը։ Մուտքի բոլոր տոմսակները ձեռքէ ձեռք են խլված։

◆ Յունվարի 8-ին Գօլօվինսկի պրօսպէկտում սպանված աւազակապետ Սվիմօնիշվիլիի մասին «Զ.»-ը հետևեալն է գրում. «Զալիկօ Սվիմօնիշվիլին Թէլաւի գ. Կիսիսխեվի գիւղիցն է. 1905 թ. մասնակցում էր յեղափոխական շարժմանը։ Յեղափոխական կուսակցութիւնները մէջ տեղից բառնալուց յետոյ, նա կազմեց աւազակախումբ, որի հետ նա բոյն հաստատեց Թէլաւի, Սղնախի, Թիոնէթի և Դուշէթի գաւառներում։ Նա կատարեց բազմաթիւ սպանութիւններ, կողոպուտներ ու դրամաշորթութիւններ։ Ի միջի այլոց նրա ձեռքով սպանվեց Թէլաւի նախկին պրիստաւ իշխ. Սուլխան Վախվախովը։ Ամբողջ վեց տարի նա ահաբեկեց Կախէթիան։ Վերջերս նա սպառնական նամակներ էր ուղարկել դրամի պահանջով Կախէթիայի համարեա բոլոր կալուածատէրերին»։

◆ Թիֆլիսի նահանգապետ Զէրնեավսկին առանձին շնորհակալութիւն յայտնելով ոստիկանական պաշտօնեաներին արիութեան համար՝ աւազակներին սպանելու գործի առիթով, փոխարքայի բարեհայեցողութեանն է ներկայացրել քաջերի ցուցակը՝ նրանց պարգևատրելու համար։

◆ Հասարակական ակումբում յունվարի 13-ին Գ. Մելիք-Շահնազարեանը կարդալու է ռեֆերատ «Պատերազմի դէմ» թեմայով։

◆ Այս յունվարի 11-ին Արքունական թատրոնում տեղի կունենայ յօբելեանական ներկայացում և հանդէս դերասան Արաքսեանի բեմական գործունէութեան 25-ամեակի առիթով։ Պէտք է արդարացի լինել, որ թէև մնում է մի օր միայն, բայց մինչև այժմ այդ յօբելեանական առիթով քիչ նիւթ տպվեց մամուլում։ Ցամենայն դէպս հայ հասարակութեան վրա բարոյական լուրջ պարտականութիւն կայ գնահատել ըստ արժանւոյն գեղարուեստի համեստ մշակներից մէկին, որ իր ոյժերն ու աշխատանքը չէ խնայել յօգուտ հայ թատրոնի առաջադիմութեան թէ անձնական բեմական գործով և թէ Հալաբարի պէս կուլտուրական ձեռնարկութիւնների կարօտ արուարձանում ժողովրդական մշտական թատրոն հաստատելով։ Առայժմ բաւականանում ենք այս երկու տողով, համոզված, որ արդէն Արաքսեան անունը շատ լաւ ծանօթ լինելով հասարակութեան՝ աջող կանցնէ յօբելեանական տօնակատարութիւնը, որի համար տրվում է Սունդուկեանի «Քանդած օջախ» կոմեդիան և որի մէջ յօբելեարը կատարելու է Գիժ-Մօզու դերը։ Աշխատաւորը արժանի է վարձի։ Ցանկանք լիակատար աջողութիւն։

◆ Շուշից մեզ գրում են. «Դեկտեմբերի 16-ին տեղիս թեմ. դպրոցում, յօգուտ նոյն դպրոցի չքաւոր աշակերտների, ներկայացրին Սունդուկեանի «Պէպօն»։ Խաղն ընդհանրապէս լաւ անցաւ»։

◆ Զաքաթալայից մեզ գրում են դեկտ. 26-ից. «Մի քանի օր առաջ Գանձակից հեռագրեցին, որ այնտեղ վախճանվել է Նուխու շրջանի հարկային տեսուչ Աղաջան Վ. Տէր-Սահակեանը։ Հանգուցեալը վայելում էր բարեխիղճ պաշտօնեայի և սրտացաւ մարդու անուն։ Նա երկար ժամանակ պաշտօնավարել է Զաքաթալայում որպէս հարկային տեսուչ, եղել է տեղական հայոց դպրոցի հոգաբարձութեան անդամ, իրան մօտ է պահել ազգային-եկեղեցական գործերին։ Թաղումը կատարվել է Գանձակում։ Մեր հասարակութեան կողմից պսակ դըրվեց հանգուցեալի դագաղի վրա: Տեղիս եկեղեցում այսօր կատարվեց հոգեհանգիստ նրա յիշատակին»:

---

*) Տես «Մշակ» № 4.

◆ Վերին-Աղդանից մեզ գրում են. «Քարվանսարայի շրջանի Վերին-Աղդան, Խաչթառակ, Թալա, Խաւարաձոր, Արմուտլի և Քրդեան գիւղերի հասարակութիւնները գեկտ. 8-ին հաւաքվեցին Քարվանսարա և, վերջինիս հետ միասին, ընտրեցին նոր տանուտէր: Ժողովին նախագահում էր հաշտ.-միջնորդ իշխ. Ի. Ճավճավաձէ: Վերընտրվեց նախկին տանուտէր Անդրէաս Պապեան, որի վերջին եռամեայ գործունէութիւնը արդիւնաւէտ էր հասարակութեան համար»:

ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

◆ Շրջաբերական գրութիւններով յանձնարարվեց Ռուսաստանի հայոց թեմակալ առաջնորդներին՝ իրանց թեմերի հայ քահանաների միջոցով յորդորել Ռուսաստանում ապրող թիւրքահայ ունևոր անձերին, որ դրամական օգնութիւն հասցնեն Թիւրքիայի գաւառների աղքատ հայ մանուկների կրթական գործին:

◆ Կոնդակ Էջմիածնի սինօդի անունով, որով պատուիրվեց ուղարկել բոլոր թեմակալ առաջնորդներին ժապաւինեալ մատեաններ և տպագրած թերթեր, Կովկասի փոխարքայի թոյլտուութեան համաձայն, մի տարի ժամանակով բոլոր հայաբնակ վայրերում հայոց եկեղեցական ծխական դպրոցների օգտին դպրոցական ֆօնդի հանգանակութիւնը կազմակերպելու համար: Գոյացած դրամը պահել Մայր Աթոռի գանձարանում Վեհափառ Կաթողիկոսի տնօրինութեան ներքոյ:

◆ Կոնդակ Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի հոգաբարձութեան նախագահ Զաւէն վարդապետի անունով, որով թոյլատրվեց, քաղաքական իշխանութեան թոյլտուութիւնն ստանալուց յետոյ, դպրոցի 75-ամեայ յոբելեանը յաւերժացնելու համար՝ հանգանակութիւն բանալ դպրոցը ապահովելու նպատակով:

◆ Կոնդակ Թիֆլիսի Մարիամեան-Յովնանեան դպրոցի հոգաբարձութեան անունով, որով հաստատվեց դպրոցի պաշտօնեաների թոշակարգի կանոնադրութիւնը:

◆ Նոյեմբերի 7—8-ին սինօդը լսեց Վեհափառ Կաթողիկոսի այս տարվայ հոկտեմբերի 24-ի և 30-ի թ. թ. 1331 և 1393 կոնդակները հայոց տառերի գիւտի 1500 և տպագրութեան 400-ամեայ յոբելեանը տօնելու մասին, որոնց նախ՝ պատուիրել Մայր Աթոռի տպարանի վարչութեան պատրաստել ժապաւինեալ տոմարներ, թերթեր և անդորրագրեր դպրոցական ֆօնդի անունով ստացվելիք դրամներն արձանագրելու համար. երկրորդ՝ ուղարկելով տոմարները, թերթերը և անդորրագրերը թեմերի առաջնորդներին և կառավարիչներին, պատուիրել նրանց Կովկասի հայաբնակ բոլոր քաղաքներում և գիւղերում կազմակերպել ժողովարարութեան գործը յանձնախմբերի ղեկավարութեամբ՝ պարտաւորեցնելով վերջիններին ստացվող դրամը փոխադրել սինօդին. երրորդ՝ ստացված նուէրների մասին պարբերաբար տպագրել «Արարատ» ամսագրում. չորրորդ՝ Մայր Աթոռի գանձարանից դպրոցական ֆօնդի համար առանձնացնել 15,000 րուբլու ընտանիք և հինգերորդ՝ պատուիրել սինօդի հաշուապահական մասին կազմել առանձին ժապաւինեալ մատեան դպրոցական ֆօնդի համար ուղարկվող տոմարները, թղթերը և անդորրագրերը մուծելու և նրանց հաշիւը պահելու համար, այլ և ունենալ յատուկ մատեան դպրոցական ֆօնդի անունով ստացվող դրամները մուծելու համար: («Արարատ»)

ԳԻՏՈՒԹ., ԳԱՐԿԱՆ., ԳԵՂ. ԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Օպերա

Արքունական թատրոնի ներկայ օպերային խմբի անդամ Տ. Օրդը իր բենեֆիսի առիթով ընտրել էր Վէրդիի «Րիգօլէտտօ» օպերան, որ խաղացվեց յունվարի 8-ին:

Օրդը սկզբից գրաւեց երաժշտասէր հասարակութեան համակրանքը: Իսկ իր բենեֆիսի օրը նա արժանացաւ անվերջ ծափահարութեան և մի քանի ընծաների ու ծաղկէփնջերի: Րիգօլէտտօյի դերում նա ցոյց տուեց լաւ արտիստի դիրքը:

Ընդհանրապէս օպերան անցաւ աջող: Բայց բենեֆիցիանտից սովորական աջողութիւն ունեցաւ տ. Սարանչեվան, ինչպէս նաև Սարաջեվ, որի ձայնը այդ գիշեր հնչում էր յստակ և որ—երեւի դիւրութեան համար—երգում էր իր պարտեան իտալերէն:

Այսօր gala ներկայացում է. կը տրվի «Նէրօն» օպերան: Ե.

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Նոր-Բայազէտ, 22 դեկտ.

Ամսիս 19-ին դպրոցական ուսուցչական խմբի անդամները տեղական սիրողների մասնակցութեամբ խաղացին «Ձեռագործի ընտանիքը» դրաման և «Ես մեռայ» կատակերգութիւնը ծխ. դպրոցի օգտին:

Կենտրոնական դերերը կատարեցին՝ պ. պ. Զալդրանեան (Կորրադօ), Պետրոսեան (Դօն-Ֆերնանդօ), Ազարեան (Մօնսենեօր) և այլն: Իսկ պրօֆ. բժշկի դերը խաղաց Ց. Ցակոբեան: Բոլորն էլ լաւ տարան իրանց դերերը: Միւսները իրանց հերթին պահպանեցին խաղի ամբողջութիւնը: Իսկ Րօզալիայի պատասխանատու դերում աւելի լաւ կը խաղար օր. Բունիաթեան, եթէ մի փոքր չը ճնշվէր տեղական հասարակութեան առաջ իբրև տեղացի, մանաւանդ որ նա նոր էր բեմ դուրս գալիս և առաջին կարգերում նստած էին իր ծնողները:

Խաղը ընդհանրապէս անցաւ բաւարար և հասարակութիւնը վարձատրեց դերակատարներին բուռն ծափահարութեամբ: Ափսոս, որ մի քանի աթոռներ դատարկ էին մնացել: Դա հետևանք էր այն բանի, որ մի քանի օր առաջ նոյնպէս խաղացվել էր «Բարեգործութեան դիմակի տակ» պիէսը, ուստի այս անգամ ժողովուրդը շատ չէր լցրել թատրոնը:

Մեր ժողովրդի մեծամասնութիւնը թատրոնը հասկանում է իբրև ցիրկ կամ ֆօկուսնիկների մի վայր: Այդ ապացուցանելու համար պատմեմ մի իրողութիւն: Մի քանի տարի առաջ, երբ դերասան Անդրանիկ ներկայացումներ էր տալիս մեզանում, աֆիշ կպցնել տալիս մի խանութի անկիւնից, խանութպանը դիմելով դերասանին ասում է. «Պրծի՛, պրծի՛ տեսնենք երբ ես ներկայացնելու այդ քո ֆօկուսները»: Խեղճ դերասանը շուարած պատասխանում է. «Պարոն, ես ֆօկուսնիկ չեմ, այլ դերասան, թատրոն խաղացող», և գլուխը թափահարելով գնում է իր գործին:

Եւ ահա շատերը թիւր հասկացողութիւն կամ ոչինչ գաղափար չունենալով թատրոնի բուն նպատակի և ճաշակի մասին՝ կարծում են, որ նա—թատրոնը—մի ցիրկ է, մի բալագան կամ թէ ֆօկուսնիկների ներկայացում...

Այդ է թերևս պատճառը, որ մեզանում ամեն մի ներկայացման, շատ քիչ բացառութեամբ, յաճախում է միշտ միևնոյն դասակարգը, որը գիտէ յարգել նրա գաղափարը և գոհաբերել նրան իր կոպէկները...

Որսորդ

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Կ. Պօլսի ռուսաց դեսպանը այցելեց Նորատունկեան էֆէնդիին և խորհուրդ տուեց հաշտութիւն կնքել բալկանեան պետութիւնների հետ:

◆ Կ. Պօլսումն է Ֆօն-դէր-Գօլց փաշան:

◆ Կ. Պօլսից հեռագրում են, որ Քեամիլ-փաշան և Նորատունկեան էֆէնդին ամեն օր սպառնական նամակներ են ստանում, թէ հաշտութիւն կնքելու դէպքում եթէ Ադրիանուպօլիսը զիջեն, նրանք կը սպանվեն: Օֆիցերների լիգան զօրքի անունից յայտնեց, թէ հաշտութեան դէպքում իսկ զօրքը մնալու է Չաթալջայի դիրքերում և կռիւը շարունակելու է:

◆ Բ. Դուռը բողոքագիր ուղարկեց մեծ պետութիւններին այն մասին, թէ իբր Եւրոպական Թիւրքիայում շարունակվում են մահմեդականների կոտորածներ քրիստոնեաների ձեռքով:

◆ Բոլոր նշաններից երևում է, որ Աւստրիան և Գերմանիան գաղտնի կերպով ակտիվ պաշտպանութիւն են ցոյց տալիս Թիւրքիային:

◆ Չաթալջայի թիւրք զօրքերի մի մասը պահանջ դրեց ի գահ կոչել վերստին Աբդիւլ-Համիդին:

◆ Եւրոպ. թերթերին հեռագրում են, որ Անատոլիայից և Զմիւռնիայից եկող զօրքերի մէջ տեղի են ունենում քրիստոնեայ զինւորների փախստեան դէպքեր: Օգտվելով տօների առիթով տրված արձակուրդից, զինւորները հագնում են քաղաքացու զգեստ, թագնվում են եւրոպական թաղամասերում, փախչում են օտարազգի նաւերը:

◆ Պատերազմի բեմից Պետերբուրգ վերադարձած Նեմիրօվիչ-Դանչէնկօն յայտնեց, թէ դաշնակիցները կորցրած 43.000 զինւորի տեղ այժմ ունեն թարմ նոր ույժեր 120,000 զինւոր:

◆ Մակեդօնիայում տիրում է թշուառ կացութիւն: 60,000 ընտանիք մնացել են անապրուստ:

◆ Իտալիան զէնքի է կոչում 600,000 զինւոր:

◆ Դարդանէլի մօտ կանգնած են մեծ պետութիւնների ռազմանաւերը ծովային ցոյցի համար:

◆ Բէյրութում անկարգութիւններ են մահմեդական ուխտաւորների մէջ: Լուրերի համաձայն՝ վիրաւորված է ռուսաց հիւպատոսը:

◆ Պատերազմի վերսկսման դէպքում Աւստրիան գրաւելու է Ալբանիան:

◆ «Н. Вр.»-ի թղթակցի ասելով՝ Աւստրիան շարունակում է իր ռազմի պատրաստութիւնները:

◆ Պարսից կառավարութիւնը Գերմանիայում գնեց մեծ քանակութեամբ հրացան, գնդակացիր և փամփուշտ:

◆ Ֆրանսիական հանրապետութեան նորընտիր պրեզիդենտ Պուանկարէն առաջին շնորհաւորական հեռագիրը ստացաւ Թագաւոր Կայսրից, որպիսի հանգամանքը թողեց մեծ տպաւորութիւն:

◆ «Рѣчь»-ը հաղորդում է, որ Կուլեարկօյի, Վերիգինի Սպիրիդօվիչի և գեներալ Կուրլօվի մեղադրական գործը ընդմիշտ ոչնչացվեց: Բոլորն էլ ստանալու են նոր պաշտօններ:

◆ Մայիսին Պետերբուրգում տեղի կունենայ գիտութեանց ճեմարանի միջազգային համագումարը:

◆ Յունվարի 2-ին I-ին խաղարկութեան 200,000 րուբլին շահեց Կիեվում ալիւրավաճառ Րօվինսկիի տոմսակը, որ առնված էր ուրիշ անձի հետ:

◆ Պետերբուրգի քաղաքային վարչութեան կից կազմված մասնաժողովը որոշեց 70,000 ր. յատկացնել փողոցների և քաղաքային շէնքերի զարդարանքի համար Րօմանօֆների Տան յոբելեանի օրը:

◆ Լիբավայում մեռած ինժեներ Սէմիկօլէնօվը յօգուտ բարձր կրթական հաստատութիւնների կտակեց 1.800,000 րուբլի:

◆ «Սարատովսկի Լիստոկի» 30-ամեայ խմբագիր և 40-ամեայ ժուռնալիստ Լեբեդեվի ընտանիքը յիշեալ լրագրի 50-ամեակի առիթով 6000 րուբլի դրեց Սարատովի համալսարանի վարչութեան տրամադրութեան տակ՝ հանգուցեալ ժուռնալիստի անունով թոշակներ հաստատելու ուսանողների համար առանց ազգի ու կրօնի խտրութեան:

◆ Ռուս-չինական պատերազմը համարվում է հնարաւոր:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

8 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Վախճանվեց յայտնի պատմաբան պրօֆ. Ֆիլէվիչը:

ՄՕՍԿՎԱ: Քաղաքագլխի պաշտօնի համար մասնանշվեցին ներկայ քաղաքագլուխ Գուչկօվը 75 թերթիկով և իշխան Լվով՝ 72 թերթիկով: Քուէարկութիւնը գնդակներով տեղի կունենայ յունվ. 15-ին:

ԱԼԵՔՍԱՆԴՐՕՎՍԿ: Տեղեկութիւն ստացվեց, թէ Մկրտութեան հանդիսին սովորական տարիների նման սառոյցի վրա տեղի ունեցաւ ձեռնամարտ Օրէխօվ քաղաքի և Պրէօբրաժէնկա գիւղի միջև: Ջուրն ընկան աւելի քան 200 մարդ. խեղդվեց 1, շատերը ստացան ջարդուածքներ, եղան մահացութեան չորս դէպքեր:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
(Ձմերային երթևեկութիւն)
Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—**Արագ գնացք** № 2—10 ժ. 12 ր. առ., հասնում է Աղստաֆա 12 ժ. 30 ր., Գանձակ 2 ժ. 55 ր., Եւլախ 4 ժ. 26 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. եր., Բագու 11 ժ. 8 ր. գիշ.: **Պոստատար գնացք** № 4—12 ժ. 36 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 3 ժ. 30 ր. գիշ., Գանձակ 6 ժ. 41 ր. առ., Եւլախ 8 ժ. 38 ր. առ., Հաջի-Կաբուլ 1 ժ. 13 ր. ցեր., Բագու 5 ժ. 36 ր. ցեր.: **Մարդատար գնացք** № 6—6 ժ. 31 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 51 ր. եր., Գանձակ 11 ժ. 20 ր. գիշ., Եւլախ 12 ժ. 56 ր. գիշ., Հաջի-Կաբուլ 4 ժ. 40 ր. գիշ., Բագու 7 ժ. 53 ր. առ.: **Խառն գնացք** № 106 (Մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—5 ժ. 53 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 10 ժ. առ., Գանձակ 2 ժ. 31 ր. ցեր., Եւլախ 5 ժ. 45 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 29 ր. գիշ., Բագու 6 ժ. 54 ր. առ.:

ԲԱԹՈՒՄ.—**Մարդատար գնացք** № 11—10 ժ. 2 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 58 ր. գիշ., Բաթում 10 ժ. 21 ր. առ.: **Պոստատար գնացք** № 3—9 ժ. 50 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 55 ր. ցեր., Բաթում 11 ժ. 7 ր. գիշ.: **Մարդատար գնացք** № 5—4 ժամ 38 ր. ցերեկվայ հասնում է Միխայլօվօ 8 ժ. 44 ր. եր., Բաթում 5 ժ. 56 ր. գիշ.: **Խառն գնացք** № 107 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 20 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 10 ժ. 10 ր. առաւ., Բաթում 12 ժ. 26 ր. գիշ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—**Պոստատար գնացք** № 4/3—1 ժ. 11 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 30 ր. առ., Ալէքսանդրօպօլ 12 ժ. 7 ր. ցեր., Էջմիածին 5 ժ. 22 ր. ցեր., Ուլուխանլու 5 ժ. 49 ր. ցեր. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. եր., Ջուլֆա 11 ժ. 40 ր. գիշ.: **Մարդ.-ապրանքատար գնացք** № 8/79 (միայն II և III կարգի վագօններով)—1 ժ. 6 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 23 ր. եր., Ալէքսանդրօպօլ 12 ժ. գիշ., Էջմիածին 5 ժ. 29 ր. գիշ., Ուլուխանլու 6 ժ. 11 ր. առ., Երևան 6 ժ. 51 ր. առաւ.: **Մարդատար-ապրանքատար գնացք** № 6/5—8 ժ. 10 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 37 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 7 ժ. 14 ր. առ., Կարս 10 ժ. 48 ր. առ.:

ԲՈՐԺՕՄ.—**Մարդատար գնացք** № 95/10—3 ժ. 17 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 57 ր. ցեր., Բօրժօմ 9 ժ. 13 ր. եր.:

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—**Արագ գնացք** № 1—9 ժ. 10 ր. եր., **Պոստատար գնացք** № 3—9 ժ. առ.: **Մարդատար գնացք** № 5—3 ժ. 46 ր. ցեր.: **Խառն գնացք** № 107—3 ժ. 8 ր. գիշ.:

ԲԱԹՈՒՄԻՑ.—**Արագ գնացք** № 12—8 ժ. 50 ր. առ., **Պոստատար գնացք** № 4—11 ժ. 32 ր. գիշ.: **Մարդատար գնացք** № 6—5 ժ. 15 ր. ցեր.: **Խառն գնացք** № 106—5 ժ. 15 ր. գիշ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—**Պոստատար գնացք** №40/3—8 ժ. առ.: **Մարդ.-ապրանքատար գնացք** № 6К./5—1 ժ. 28 ր. ցեր.: **Մարդ.-ապրանքատար գնացք** № 8Э/7—5 ժ. 28 ր. ցեր.:

ԲՈՐԺՕՄԻՑ.—**Մարդատար գնացք** № 9/10В—11 ժ. 22 ր. առ.:

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐ. ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ

ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ

Ն. Ռ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

(Գոյութիւն ունի 1895 թ.)

Հեղինակ առևտրական հաշուապահութեան ձեռնարկի և զանազան մասնագիտական ձեռնարկների:

Տալիս է երկու սեռի անձանց մասնագիտական առևտրական գիտութիւն 4-ամսեայ դասընթացքում, ամենօրեայ պարապմունքներով:

Դասընթացքներում անցնում են.—Առևտրական և արդիւնաբերութեան զանազան ճիւղերի հաշուապահութիւն, նաւթարդիւնաբերութեան և նաւթագործութեան ճիւղի հետ միասին, զանազան մեթօդներով, կատարեալ իրագործումն կրկնակի իտալական սիստեմով և առևտր. թւաբանութիւն, առևտր. նամակագրութիւն, մուրհակային և առևտրական իրաւունքներ, քաղաքատնտեսութիւն, վատ ձեռագրի ուղղումն:

Ոչ պարտադիր առարկաներն են՝ 1) Օտար լեզուներ, 2) Ստենօգրաֆիա (սղագրութիւն) և 3) Րեմինգտօնի վրա գրել:

Ուսուցիչները բարձր կրթութիւն ստացած մասնագէտներ են, որոնք գործնականապէս և տեսականապէս պատրաստված են ամեն մի առարկայի համար առանձին:

Վկայագրերը տրվում են մինիստրութեան թոյլտուութեամբ:

Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ից: Խնդրագիրների ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան ժամը 9—11-ը, երեկոյեան 5—7-ը: Ծրագիրը և կանոնները տրվում և ուղարկվում են ձրիաբար: Դասընթացքներին կից հաստատված են քիչ պատրաստված անձանց համար առանձին պատրաստողական և լրացուցիչ դասարաններ ռուսաց լեզուի և թւաբանութեան համար:

Անձամբ և նամակներով դիմել՝ Тифлисъ, Учредит. Бухг. Курсовъ Н. В. Абраамяну, Николаевская, 22, Телефонъ 7—44

(կ. հ. ե.) 916. 0—12

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ սրանով յայտարարում է, որ Ներսիսեան դպրոցի համար հարկաւոր է ԳԱՆՁԱՊԱՀ: Տարեկան ռոճիկն է 800 րուբլի: Գանձապահը ներկայացնելու է որպէս ապահովութիւն 6000 րուբլի գրաւական կամ կանխիկ դրամով և կամ տոկոսաբեր տոմսերով: Ցանկացողները պէտք է ներկայացնեն խնդիրներ Հոգաբարձութեան անունով մինչև դեկտեմբերի 16-ը, որից յետոյ խնդիրներ ընդունելու ցանկը կը փակվի:

(հ.կ.չ.) 17. 4—2

ՔԱՄԱԼԵԱՆՑ Ս. դպրի

ՄԱՐԳԱՐԷՆԵՐ

Կրօնի գիրքը. Թոյլատրված Վեհափառ Հայրապետից, դասընթացք միջն. դպրոցների Գ. ԴԱՍԱՐԱՆԻ և ծխական դպրոցների Դ. ՏԱՐՈՒ, 160 էջ, գինը 40 կ.:

Դիմել Թիֆլիսի գրախանութներին, ուր վաճառվում են կրօնի միւս գրքերը. Ա. տարի 10 կ., Բ. տարի 20 կ., Գ. տարի 35 կ., «ԿՐՕՆԻ ԴԱՍԱՏՈՒԹԻՒՆ» 40 կ.:

(կ.հ.) 995. 5—3

Լոյս տեսաւ և վաճառվում է

ԳԷՈՐԳ Ք. ՄԿՐՏՈՒՄԵԱՆԻ

ՋՐԿՎԱԾՆԵՐԸ

Գինն է 50 կոպ.

Դիմել՝ «Գուտտենբերգ», «Գիր», «Կենտրոնական» գրավաճառանոցներին և հեղինակին՝ Астрахань, Григоріанская ул. д. № 15.

(ե.հ.կ.) 11. 10—2

ԳՐԻԳՈՐ ՎԱՆՑԵԱՆԻ

կազմած դասագրքերը

«ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ» 1 ր.

«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ» պատկ. 50 կ.

Դիմել Թիֆլիսի գրավաճառներին.

«ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ» պահեստը «Գ ի ր» գրախանութում:

(կ.հ.) 996. 5—3

Մօսկվայի ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԵՑԻԿ ԽՄԲԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ հրատարակութեամբ լոյս է տեսել երաժշտագէտ երգահան ԵՂԻՇԷ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆԻ հեղինակութիւններից՝ № 1

ՎՐԱՑԱԿԱՆ ՕՐՕՐՔԻ ԵՐԳԸ

մէներգ դաշնամուրի նուագակցութեամբ, տ. 5. № 4. Գինն է 50 կ.:

Տպագրվում է նոյն հեղինակի № 2

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

երգի և դաշնամուրի պարզ նուագակցութեամբ, տ. 6. Գինն է 60 կ.:

Դիմել՝ Москва, Армянскій пер., д. Армянской церкви, кв. № 11. П. С. Багратяну.

(հ. կ.) 3. 4—2

Առևտրի և Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող

Տ. Մ. ՓԻԼՈՍԵԱՆԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ

Թիֆլիս, Միխայէլեան պր. 24/4. Տելէֆօն № 976.

Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն:

Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ:

Գործնական զբաղմունքները կատարվում են կուրսերում՝ Լօնդօնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comptoir-ում: Նիւթերն առնվում են բէալ կեանքից: Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշուապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն). բ.) ոչ-պարտադիր. 1) Օտար լեզուներ. 2) Սղագրութիւն. 3) Դակտիլօգրաֆիա (րեմինգտօն և այլ. և 4) Առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով: Զբաղմունքները կատարվում են և դաս-դաս: Ունկնդիրների թւի շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարաքաղաքացիների համար: Ունկնդիրների թիւը սահմանափակված է: Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ին: Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը: Ծրագիրը և կանոններն ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում: Կուրսերը ֆիրմաներին յանձնարարում են հաշուապահներ, օգնականներ և առևտր. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից: (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 228 ունկնդիր, որոնցից 42 հոգի իգական սեռից):

Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝ Տ. ՓԻԼՈՍԵԱՆ

(ա. օ.) 376. 0—23

ԲԱՑՎԱԾ Է 1913 ԹՒԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՀՈՎԻՏ

ԱԶԳԱՅԻՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

շաբաթաթերթ

Հրատարակութեան VIII տարի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ		
	Տարեկան	4 ր. —
	Կէս տարվան	2 ր. 50 կ.
	Ամսական	— 50 կ.

Արտասահման տարեկան՝ 12 ֆր., կէս տարվան՝ 7 ֆր.:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Խմբագրութեան հասցէն՝ Редакція армянскаго журнала «ОВИТЪ», Тифлисъ. Արտասահմանից՝ Rédaction du journal arménien «HOVIT», Tiflis, (Caucase, Russie).

(օ. մ.) 929. 10—10

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎ ԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ

ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ

(ԼՈՐԻՍ-ՄԵԼԻՔՈՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)

կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում է լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրօշիւրներ, բլանկներ, աֆիշաներ, ծրագիրներ, հարսանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր եւ այլն:

Ընդունվում են տպագրական պատուէրներ հետևեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, արաբերէն և լեռնականների բարբառով:

Պատուէրները կատարվում են մաքուր, ճշտօրէն և չափաւոր գներով: Ընդունվում են նաև շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով:

Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կազմել տալ, կամ բրօշիւրներ շինել, ու այնու յանձնել:

ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՊՐԷՍ-ԿՈՒՐԱՆՏ ԳՆԵՐՈՎ:

Տելէֆօն № 67.

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный